



Humanitarian Aid
and Civil Protection



ԱՌՆԱԴ
ARNAP
DRR NATIONAL PLATFORM



ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆԿԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ



Այս ուսումնասիրությունն իրականացվել է Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական գլխավոր վարչության կողմից ֆինանսավորվող Աղետների ռիսկերի կառավարման տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի (ԴԻԴԵԿՈ) «ԱՌՆԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԴԱՅՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ շրջանակներում:

<<Լոռէ>> փրկարար ջոկատ Ստեփանավան

Լոռու մարզի Թումանյան համայնքի <<Աղետների ռիսկի նվազեցման գործընթաց>>-ը կատարվել է ՄԱԶԾ և ԱՌՆԱՊ սահմանած չափորոշիչներին համապատասխան:

ԱՌՆ ուսումնասիրությունն իրականացրել են <<Լոռէ>> փրկարար ջոկատի հրահանգիչ՝

Աննա Առաքելյանը,

Կամավորներ՝

Արդան Մինասյանը,

Անի Պետրոսյան,

Լիլիթ Իրիցյան,

Սյուզաննա Անդրեասյան,

Իզոլդա Օհանյան:

Վերլուծության պատասխանատու՝

Անժելա Բադալյան՝ «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ»ավագ հրահանգիչ,
Ճգնաժամային Կառավարման Պետական Ակադեմիայի դասախոս,

օգնականներ՝

Աննա Առաքելյան,

Լիլիթ Իրիցյան:

ԱՌՆ գործընթացի պատասխանատու՝

Արմեն Առաքելյան՝ «Ստեփանավանի «Լոռէ» փրկարար ջոկատ» Զննախագահ, Ճգնաժամային Կառավարման Պետական Ակադեմիայի միջին մասնագիտական ծրագրերի ղեկավար, դասախոս:

ԹՈՒՄԱՆՅԱՆ



ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Աղետների ռիսկերի նվազեցման համակարգը գործընթացների և գործառույթների մի շրջանակ է, որի նպատակն է բարձրացնել աղետներին դիմակայելու կարողությունները: Այն նպատակաուղղված է կանխելու կամ կանխարգելելու վտանգները, նվազեցնելու այդ վտանգների հնարավոր բացասական ազդեցությունը, ինչպես նաև նպաստելու հասարակության կայուն զարգացմանը:

Դպրոցում իրականացված ուսումնասիրության իրականացումը հնարավորություն է տալիս դպրոցներին, որոշակի աջակցության դեպքում, բացահայտել աղետներին և արտակարգ դրավիճակների հետ կապված իրենց խնդիրները, օգտագործել իրենց կարողությունները՝ դիմակայելու աղետներին և արտակարգ դրավիճակների ազդեցությանը,

1. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Թումանյան համայնքում աղետների ռիսկի նվազեցման գործընթացը լավագույնս կազմակերպվելու համար ստեղծվել է Աղետների ռիսկի նվազեցման համայնքային թիմ: Գործընթացը իրականացվել է համայնքային մասնակցային սկզբունքով՝ ԱՌՆ համայնքային թիմի և համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ: Հարկ է նշել հիմնական դերակատարների և բնակիչների մասնակցությունն ու շահագրգռվածությունը ԱՌՆ գործընթացի ընթացքում:

Համայնքում ԱՌՆ գործընթացի մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 118 անձ:

- Համայնքի ընդհանուր ժողովի մասնակիցներ – 12 մարդ, որոնցից համայնքի ղեկավար, համայնքապետարանի աշխատակիցներ – 5, առողջության կենտրոնի տնօրեն, դպրոցի տնօրեն, ուսուցիչներ – 2, մանկապարտեզի տնօրեն, մանկապարտեզի հաշվապահ,
- կրթական ոլորտի ֆոկլուս խումբ – 9/ տնօրեն /3 ուսուցիչ/ 5 աշակերտ / ,
- առողջապահական ոլորտի ֆոկլուս խումբ – 3,
- հարցմանը մասնակցած համայնքի բնակիչներ – 94:

Ուսումնասիրության մասնակիցների 45%-ը եղել են տղամարդիկ:

Ըստ տարիքի մասնակիցների՝

- 15%-ը կազմել է 18-26 տարիքային խումբը,
- 29%-ը կազմել է 26-50 տարիքային խումբը:
- 21%-ը կազմել է 50-ից բարձր տարիքային խումբը:

ԱՌՆ գործընթացի արդյունքում հավաքագրված տվյալները համայնքի հետ համատեղ՝ ընդհանուր ժողովի ընթացքում ենթարկվել են համեմատական վերլուծության, որի արդյունքների հիման վրա մշակվել են առաջարկություններ համայնքին սպառնացող վտանգների նվազեցման ուղղությամբ:

1.1 Երկրորդական աղբյուրների տվյալներ

Թումանյան համայնքի վերաբերյալ տվյալները և տեղեկությունները հավաքագրվել են Լոռու մարզպետարանից, Թումանյանի համայնքապետարանից, մարզային փրկարար վարչությունից, կադաստրի պաշտոնական կայք էջից և այլն:

1.1.1 Համայնքի տեղագրությունը

Թումանյան համայնքը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Ալավերդու տարածաշրջանում, Դեբետ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից՝ 38 կմ: Թումանյանը տեղակայված է ծովի մակարդակից 810 մ բարձրության վրա:

Համայնքի տարածքով է անցնում Դեբետ գետի 4 կմ հատվածը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է՝ 10096,68 հա: Համայնքի վարչական տարածքի մեջ մտնում են Թումանյան քաղաքը և Զոբեր կայարանի գյուղը:

Կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ձմռան ամենացուրտ ամիսը հունվարն է, հունվարյան միջին ջերմաստիճանը $-1,4^{\circ}\text{C}$: Ամռան ամենատաք ամիսը հուլիսն է, միջին ջերմաստիճանը $21,3^{\circ}\text{C}$: Տարեկան միջին ջերմաստիճանը $10,2^{\circ}\text{C}$, մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 500-600 մմ:

Բնական լանդշաֆտները լեռնանոտառներ են:

Շրջակայքում կան կավի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն և արդյունահանվում են:


1.1.2 Համայնքի բնակչությունը

Թումանյանը 1947թ.-ից դարձել է քաղաքատիպ ավան, իսկ 1995թ.-ի վարչատարածքային ռեֆորմից հետո այն դասվել է Հայաստանի քաղաքների շարքին: Նախկինում մտել է Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ և ունեցել է Ձագիձոր, Ձաղիձոր անվանումները: Թումանյան է վերանվանվել 1951թ.-ին՝ ի հիշատակ հայ մեծ գրող Յովհաննես Թումանյանի:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները վերցված են կադաստրային տվյալներից:

Թումանյան համայնքի բնակիչների վերաբերյալ տվյալները առկա են 1926թ.-ից: Թումանյան համայնքի բնակչության թիվը կազմում էր՝

- | | |
|--------------------|--------------------------|
| • 1926թ-ին – 42, | • 2009թ-ին – 1854, |
| • 1959թ-ին – 2640, | • 2010թ-ին – 1847, |
| • 1964թ-ին – 2864, | • 2011թ-ին – 1797, |
| • 1980թ-ին – 1881, | • 2012թ-ին – 1797, |
| • 2001թ-ին – 1909, | • 2013թ-ին – 1733, |
| • 2004թ-ին – 1900, | • 2014թ-ին – 1696, |
| • 2005թ-ին – 2000, | • 2015թ-ին – 1887 բնակիչ |



Համայնքի բնակչության թիվը 1926-2015թթ.

Ներկայումս Ռուսական քաղաքի բնակչության թիվը կազմում է 1878 մարդ:

Տեղական ինքնակառավարումը իրականացվում է համայնքապետի և 5 հոգուց /4 տղամարդ/ 1 կին/բաղկացած ավագանու կողմից: Համայնքապետի կողմից ձևավորված համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 11 հոգուց /5 տղամարդ, 6 կին/:

1.1.3 Համայնքի սպառնացող վտանգավոր երևույթները

Ըստ համայնքում կատարված ուսումնասիրությունների կարելի է փաստել, որ համայնքին սպառնում են տարբեր բնույթի վտանգներ:

Բնածին բնույթի վտանգավոր երևույթներից համայնքի համար սպառնալիք են ներկայացնում ցրտահարությունը, կարկտահարությունը, երաշտը, ուժեղ քամիները, առատ տեղումները, քարաթափումը, երկրաշարժը, սելավը, սողանքը, կայծակը, հրդեհը: Վերջին տարիներին արձանագրվել են կարկտահարության, ցրտահարության, երաշտի և կայծակի դեպքերի հաճախականության աճ: Երաշտը պայմանավորված է մշակվող հողամասերի որոշ մասերում ոռոգման ցանցի վատ վիճակով կամ բացակայությամբ:

Հայպետհիդրոմետ ծառայության դիտարկումների 30-100 տարիների տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ հանրապետության որոշ տարածքում տարեկան տեղումները պակասել են 5.8%-ով ընդ որում տաք ժամանակահատվածում նվազել են 7.1%-ով իսկ ցուրտ սեզոնում աճել են 8.5%-ով: Եթե նման միտումը պահպանվի, ապա 2100թ-ին օդի ջերմաստիճանը կբարձրանա 1.70C-ով, տեղումների քանակը կնվազի 10%-ով: Այդ հետևանքները կարող են էապես ազդել կլիմայից կախում ունեցող տնտեսության ճյուղերի վրա:

Համայնքի համար վտանգ են ներկայացնում անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները, որոնք հիմնական մարդկանց անփութության և անզգուշության հետևանք են: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները բացասական ներգործություն են ունենում շրջակա միջավայրի վրա: Կլիմայի փոփոխության պայմաններում խոտածածկ տարածքների հրդեհները էկոհամակարգի համար դառնում են ամենաանմիջական և խոշոր սպառնալիքները: Ավելացող հրդեհների հետևանքներին գումարվում է երաշտի և ջերմային սթրեսի պատճառով

կրճատվող վերարտադրությունը: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները ծանր հետևանքներ են թողնում նաև մարդու կենսակերպի և առողջության վրա:

Մարդածին բնույթի վտանգներից համայնքի համար սպառնալիք են ներկայացնում մարդկային գործոնով պայմանավորված ավտովթարները, կենցաղային հրդեհները, շենքերի, շինությունների հանկարծակի փլուզումները: Բնակչության շրջանում ԱՌՆ վերաբերյալ գիտելիքների պակասը բարձրացնում է համայնքի խոցելիության աստիճանը:

Համայնքի համար վտանգ են ներկայացնում կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակները, որոնք կարող են հանգեցնել մարդկանց, մշակաբույսերի և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների: Վերջին տարիներին հատկապես ավելացել է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունները, որոնք հիմնականում դրանց դեմ պայքարի միջոցների բացակայության կամ անկատարելիության պատճառ են:

Վարակիչ և զանգվածային բնույթ կրող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը անասնաբուժության հիմնական ու կարևորագույն խնդիրներից է:

Համաձայն վիճակագրական տվյալների ամեն մեկ վարակիչ հիվանդությունը առավել մեծ վնաս է հասցնում անասնապահությանը, քան տաս ոչ վարակիչ հիվանդությունները: Ուստի վարակիչ, հատկապես ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը ունի մեծ նշանակություն անասնաբուժության համար, քանի որ այն համայնքի եկամտի աղբյուրն է:

Համայնքի գյուղացիական տնտեսություններին մեծ վնաս են հասցնում մկնանման կրծողները: Ըստ վիճակագրության, կրծողների պատճառով գյուղատնտեսությանը տարեկան հասցվող վնասի չափը կարող է կազմել 10-12%: Մկնանման կրծողները հիմնականում վնասում են հացահատիկային մշակաբույսերին և բանջարանաբուստանային բուսատեսակների հողատարածքները, այգիները, խոտհարքները:

Այլ բնույթի վտանգներից համայնքի թե՛ բնակչության թե՛ գյուղատնտեսական կենդանիների համար սպառնալիք են ներկայացնում վայրի գազանները:

Բնակչության և գյուղատնտեսական կենդանիների համար վտանգ են ներկայացնում նաև վայրի գազանները, որոնց ներխուժումները համայնքի տարածք դարձել են ավելի հաճախակի: Վայրի գազանները դառնում են նաև մարդկանց շրջանում վախի առաջացման պատճառ:

1.1.4 Չբաղվածություն

Համայնքի տնտեսական առաջատար ճյուղն է արդյունաբերությունը: Չբաղվում են նաև անասնապահությամբ: Համայնքի բնակչության մի մասը տնամերձ տարածքներում զբաղվում է բանջարաբուծությամբ /վարունգ, սոխ, կաղմաբ և այլն/ և այգեգործությամբ /խնձոր, տանձ/:

Համայնքում գործում է քարի արտադրամաս, որտեղ զբաղված են 15 մարդ և կարի արտադրամաս, որտեղ զբաղված են 4 մարդ:

Համայնքում գործում է նաև 6 խանութ:

Ըստ քաղաքապետի՝ համայնքի աղքատության տոկոսը կազմում է 70%:

1.1.5 Հիմնական շինություններ

Համայնքի հիմնական շինություններն են՝ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն /արվեստի դպրոց/, համայնքապետարան, բժշկական կենտրոն, քարի արտադրամաս, կարի արտադրամաս, 6 խանութ և այլն:

1.1.6 Արտաքին և ներքին ճանապարհներ

Համայնքը գտնվում է Մ-6՝ Վանաձոր (Մ-3 հատման կետ) – Ալավերդի – Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վրա: Համայնքը միջպետական ավտոճանապարհի հետ կապող ճանապարհը գտնվում է բարվոք վիճակում, սակայն ունի վերանորոգման կարիք:



Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 16,1 կմ: Ներհամայնքային ճանապարհները գտնվում են բարվոք վիճակում, սակայն ունենում են մասնակի վերանորոգման կարիք: Ճանապարհների 14 կմ հատվածը լուսավորված է:

Համայնքում առկա է 5 ավտոմոբիլային կամուրջներ, որից 2-ը գտնվում են նորմալ վիճակում, իսկ 3-ը գտնվում են վատ վիճակում, ունեն հիմնանորոգման կարիք: Համայնքն ունի նաև մեկ հետիոտնային կամուրջ, որը գտնվում է անմխիթար վիճակում:

1.1.7 Տրանսպորտ

Կապը մարզկենտրոնի և հարևան համայնքների հետ իրականացվում է երթուղային միկրոավտոբուսի և անհատական մեքենաների միջոցով:

1.1.8 Կոյուղի

Համայնքը կոյուղացված է, ունի մասնակի վերանորոգման կարիք:

1.1.9 Գազաֆիկացում

Համայնքը գազաֆիկացված է: Գազամատակարարումից օգտվում է բնակչության 90%-ը:

1.1.10 Աղբահանություն

Համայնքում կատարվում է աղբահանություն տեղական ինքնակառավարման մարմինների ուժերով, շաբաթական 2 անգամ:

1.1.11 Ջրամատակարարում

Համայնքի մեծ մասը խմելու ջուր ստանում է Ստեփանավան-Ալավերդի ջրատարից, միայն 2 թաղամասում՝ բնական աղբյուրից: Ջրաբաշխումը կատարվում է կենտրոնացված համակարգի միջոցով: Համայնքն ունի խմելու ջրի 3 ջրամբար, որոնք գտնվում են նորմալ վիճակում:

Խմելու ջրով ապահովված է ամբողջ համայնքը: Խմելու ջուրը հիմնականում տրվում է ըստ գրաֆիկի՝ օրական 12 ժամ: Համայնքի 1 թաղամասում խմելու ջուրը շուրջօրյա է:

Համայնքի ջրամատակարարումն բարելավելու համար անհրաժեշտ է առաջին և երրորդ թաղամասերի ներքին ցանցը փոփոխել, արտաքին ցանցը վերանորոգել, ինչպես նաև համայնքում առկա 3 ջրամբարները ցանկապատել:

1.1.12 Ոռոգում

Համայնքում չկա ոռոգման համակարգ:

1.1.14 Հատուկ ծառայություններ

Ոստիկանություն

Համայնքը սպասարկվում է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ալավերդու բաժնի կողմից: Մոտակա հենակետը տեղակայված է Ալավերդի համայնքում:

Հրշեջ-փրկարար ծառայություն

Տարածաշրջանը սպասարկվում է ՀՀ ԱԻՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարար վարչության ստորաբաժանումների կողմից: Մոտակա ստորաբաժանումը տեղակայված է Ալավերդի համայնքում:

1.1.15 Կենսական կարևոր համակարգեր

Կրթություն

Դպրոց



Թումանյան համայնքում իրականացվում է միջնակարգ կրթություն, որը հանդիսանում է պարտադիր կրթության երրորդ մակարդակը և ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:

Դպրոցը կառուցվել է 1974 թվականին: Դպրոցի շենքը բաղկացած է 3 մասնաշենքից, երկու և երեք հարկանի քարաշեն շինություն է: Մասամբ վերանորոգվել է : Դպրոցն ունի 12 դասասենյակ, ֆիզիկայի լաբորատորիա, քիմիայի լաբորատորիա, ՆՁՊ սենյակ, ուսուցչանոց, տնօրենի սենյակ, բուժկետ , գրադարան:

Աշակերտների թիվը կազմում է՝ 116, աշխատողներինը՝ 30 մարդ:

Համայնքում իրականացվում է նախադպրոցական կրթություն:

Առողջապահություն

Թումանյան քաղաքը սպասարկվում է <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից: Համայնքում գործում է <<Թումանյանի առողջության կենտրոն>> ՊՓԲԸ-ն: Առողջության կենտրոնի շենքը մեկ հարկանի է: Առողջության կենտրոնն ունի 3 աշխատող /1 բժիշկ, 2 բուժքույր/, ապահովված է դեղորայքով, բժշկական սարքավորումներով և առաջին օգնության անհրաժեշտ պարագաներով: Սպասարկվող ազգաբնակչության թիվը՝ 2779 մարդ:

Մշակույթ

Թումանյանի մշակույթի տուն

Համայնքի մշակույթի տան շենքը երկհարկանի է: 2009-2010թթ.-ին մշակույթի տան շենքը վերանորոգվել է <<Սոցիալական ներդրումներ հիմնադրամ>>-ի կողմից: Մշակույթի տան շենքում գործում է արվեստի դպրոցը:

Արվեստի դպրոց

Համայնքի արվեստի դպրոցն ունի 22 աշակերտ և 3 աշխատող

Պատմամշակութային կոթողներ

Համայնքի պատմամշակութային կոթողներն են՝ հին գերեզմանոցը (9-15դդ.), Հովհաննես Թումանյանի հուշարձան (1986թ.), խաչքարեր (9-15դդ.), Զորայրավանք (11-12դդ.), Սուրբ Գրիգոր վանք (11-12դդ.):

Կապի միջոցներ

Համայնքում կա ստացիոնար և բջջային հեռախոսակապ, ինտերնետ և փոստային ծառայություն:

Տեղեկատվական աղբյուրներ

Տեղեկատվական աղբյուրներից համայնքին հասանելի են հանրային և արբանյակային հեռուստատեսությունը, հանրային ռադիոն, ինտերնետը և մամուլը:

1.2 Ակնադիտական զննում

Համայնք մտնելու առաջին իսկ պահից ԱՌՆ թիմի անդամների և համայնքի պատասխանատու անձի հետ միասին իրականացվել է ակնադիտական զննում, որի ընթացքում գրանցվել են ԱՌՆ գործընթացի համար անհրաժեշտ առաջնային տպավորությունները համայնքի շինություններից, ճանապարհներից, աղբահանությունից և այլն:

Ակնադիտական զննումների աղյուսակ

Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ	Նկարագիր
Ինֆրաստրուկտուրա / Ենթակառույցներ/	
Հիմնական շինությունները	Համայնքի բնակելի ֆոնդը հիմնականում կազմված է երկհարկանի քարե առանձնատներից: Բնակելի տները մեծամասամբ գտնվում են բավարարվիճակում: Տների մի մասի վրա կան տեղադրված արբանյակային ալեհավաքներ: Տնամերձ տարածքներում կան այգիներ և բանջարանոցներ: Համայնքի հիմնական շինություններն են՝ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն /արվեստի դպրոց/, համայնքապետարան, բժշկական կենտրոն և այլն: Համայնքում գործում են նաև քարի և կարի արտադրամասեր:
Ճանապարհների հիմնական/ներքին	Համայնք մտնող ճանապարհը ասֆալտապատ է, սակայն ունի մասնակի վերանորոգման կարիք ունի: Ներհամայնքային ճանապարհների մեծ մասը գտնվում է նորմալ վիճակում: Սակայն մասամբ վերանորոգման և լուսավորման կարիք ունեն:
Էներգիա	Բնակչության Էներգիայի հիմնական աղբյուրը գազն ու Էլեկտրաէներգիան է: Որպես Էներգիայի աղբյուր օգտագործվում է նաև վառելիքայտը:
Կամուրջ	Համայնքում կան 5 ավտոմոբիլային կամուրջ, որոնցից 2-ը բավարարվիճակում են, իսկ 3-ն ունեն հիմնականորոգման կարիք: Համայնքում կան 1 կամուրջ, որը վթարային է և հիմնականորոգման կարիք ունի:
Կենսական կարևոր համակարգեր	
Համայնքապետարան	Համայնքապետարանի շենքը երկհարկանի է: Ընդհանուր առմամբ գտնվում է նորմալ վիճակում, սակայն ունի փոքր-ինչ խնդիրներ: Շենքի տանիքը վերանորոգման կարիք ունի: Համայնքապետարանը ունի խնդիրներ կապված լուսամուտների և դռների փոփոխման, ջեռուցման համակարգի անցկացման, գույքի ձեռքբերման և այլն:
Դպրոց	Համայնքում գործում է միջնակարգ դպրոց: Դպրոցի շենքը եռահարկ է, գտնվում է վատ վիճակում և ունի հիմնականորոգման կարիք: Դպրոցն ունի գույքի ձեռքբերման, ցանկապատման, ջեռուցման, համակարգիչների և նոր տեխնիկայի, լաբորատորիաների նոր գույքի, նյութերի և սարքավորումների ձեռքբերման և այլն: Դպրոցում բուժկետի հիմնման կարիք կա:
Մանկապարտեզ	Համայնքում գործում է բժշկական կենտրոն: Բժշկական կենտրոնի շենքը մեկ հարկանի է, գտնվում է վատ վիճակում: Շենքը հնակառույց է և ունի հիմնականորոգման կարիք: Սանհանգույցները, տանիքը, դռներն ու լուսամուտները գտնվում են վատ վիճակում: Բժշկական կենտրոնի բուժսարքավորումները հին են և նորի ձեռքբերման կարիք կա:
Բուժկետ	Համայնքում գործում է բժշկական կենտրոն: Բժշկական կենտրոնի շենքը մեկ հարկանի է, գտնվում է վատ վիճակում: Շենքը հնակառույց է և ունի հիմնականորոգման կարիք: Սանհանգույցները, տանիքը, դռներն ու

	լուսամուտները գտնվում են վատ վիճակում: Բժշկական կենտրոնի բուժսարքավորումները հին են և նորի ձեռքբերման կարիք կա:
Ռիսկային վայր – հանգստի /ժամանցի / հանրային հավաքի վայրեր	
Մշակույթի տուն	Համայնքն ունի մշակույթի տուն: Մշակույթի տան շենքը երկհարկանի է, վերանորոգված է և գտնվում է լավ վիճակում: Մշակույթի տան շենքում գործում է արվեստի դպրոցը:
Արվեստի դպրոց	Համայնքի արվեստի դպրոցը գործում է մշակույթի տան շենքում: Արվեստի դպրոցն ունի գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման, ջեռուցման անցկացման կարիք:
Մարզադաշտ	Համայնքն ունի մարզադահլիճ, որը գտնվում է բավարար վիճակում:
Սոցիալ-տնտեսական	
Կրթություն	Արհեստագործական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթօջախները գտնվում են մարզկենտրոնում, Երևանում, Լոռու մարզի և այլ քաղաքներում:
Առողջապահություն	Հիմնական բժշկական միջամտությունը բնակչությանը հասանելի է Ալավերդու բժշկական կենտրոնում, Երևանի և այլ քաղաքների բուժհաստատություններում:
Զբաղվածություն	Բնակչությունը հիմնականում զբաղվում է արդյունաբերությամբ: Համայնքում գործում է քարի և կարի արտադրամաս: Նաև զբաղվում են անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղատնտեսությունից ստացվող եկամուտը ուղղակիորեն կախված է նաև բնության քմահաճույքներից և կրում է սեզոնային բնույթ:

1.2 Քարտեզագրում

	Քարտեզագրման նպատակն է բացահայտել և համայնքի համար ակնառու դարձնել համայնքի աղետավտանգ ու ռիսկային տեղանքները, ինչպես նաև համայնքի կարողություններն ու խոցելիությունը՝ վերջիններս զետեղելով համայնքի քարտեզում:
--	--

Քարտեզագրումը նպատակ ունի նաև համայնքի համար ակնառու դարձնել ռիսկային բոլոր տեղանքները, հատկապես մատնանշելով այն տեղանքները, որոնք առօրյա կյանքում կամ տեսանելի չեն կամ էլ անուշադրության են մատնված:


Ռեսուրսասիրության ընթացքում կատարվել են սխեմատիկ և վիզուալ գրանցումներ, լուսանկարվել են նաև վտանգավոր և խոցելի տարածքները:

Հավաքագրված նյութերը տեղադրվել են համացանցից դուրս բերված քարտեզի վրա, քանի որ համայնքը չունի աշխատանքի համար անհրաժեշտ քարտեզներ:

Նախկինում GTZ-ի կողմից սելավի, սողանքի և հեղեղման վտանգների մասնագիտական ուսումնասիրության քարտեզ (ԳԵՈԿՈՄ)

Թումանյան համայնքի ջրհեղեղների, սելավների և սողանքների քարտեզ

Մասշտաբ 1:10,000



Ակնադիտական գնումից քարտեզագրումից հետո կազմակերպվել է ընդհանուր ժողով համայնքի բնակիչների և տարբեր մասնագետների ներգրավմամբ:
 Ընդհանուր ժողովի ընթացքում ներկայացվել են,
 քննարկվել և կրացվել են ԱՌՆ հրականացման միջարքործիքներ,
 Մասնակիցների թիվը եղել է 15:

1.4 Սեզոնային օրացույց

Սեզոնային օրացույցի օգնությամբ վերհանվեցին տարվա ընթացքում համայնքում տեղի ունեցած աղետների, սոցիալ-տնտեսական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների, հիվանդությունների բռնկման ժամանակահատվածները համայնքի բնակիչների տեսանկյունից: Այն ցույց է տալիս համայնքին սպառնացող վտանգների ժամանակահատվածները, դրանց ազդեցությունը, ներառյալ կլիմայական փոփոխության հետ կապված ազդեցությունը:

Սեզոնային օրացույցը լրացվել է համայնքի հետ միասին, որի արդյունքները ներակայացված են ստորև:

Սեզոնային օրացույցի աղյուսակ

Սեզոնայնություն Իրադարձություններ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Սոցիալ-տնտեսական												
Բարձր եկամուտներ								x	x			
Ցածր եկամուտներ		x	x	x								
Արտագնա աշխատանք		x										
Վերադարձ												x
Բերքահավաք								x	x	x		
Պարապուրդ	x	x	x									x
Անասունների մորթ											x	x
Սերմնացան, ցանք			x	x								
Առողջապահություն												
Գրիպի համաճարակ			x	x							x	x
Աղիքային ինֆեկցիաներ							x	x				
Տուբերկուլյոզ												
Վտանգներ												
Ցրտահարություն			x	x	x							
Կարկտահարություն					x	x		x				
Երաշտ						x	x	x				
Սելավ			x	x								
Ուժեղ քամի			x	x	x				x	x		
Սողանք			x	x						x	x	
Քարաթափում			x	x								
Կայծակ, ամպրոպ				x	x	x			x	x		
Այլ վտանգներ, երևույթներ												
Անտառային կոտորած կտարածքների հրդեհ							x	x	x			

Մկնանման կրծողներ, մորեխներ		x	x	x							x	x
Վայրի գազաններ	x											x

Համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտի համար համեմատաբար բարենպաստ է աշուն-ձմեռ ժամանակահատվածը: Այս ժամանակահատվածում դիտվող բարձր եկամուտների պատկերը պայմանավորված է արտագնա աշխատանքների ցվեթաղարձից, ստացված բերքի վաճառքից և անասունների մորթից գոյացած եկամուտներով:

Համայնքի բնակչության գերակշռող մասը զբաղված է արդյունաբերությամբ: Նաև զբաղված են բանջարաբուծությունում և այգեգործությունում: Ձմռան ժամանակահատվածում /դեկտեմբեր-փետրվար/ դիտվում է թերզբաղվածություն: Այդ ժամանակահատվածում բնակչությունը զբաղվում է միայն անասնապահությամբ: Գարնան և աշնան ժամանակահատվածում համայնքում կատարվում են ցանքսի աշխատանքներ, ամռանը և աշնանը՝ բերքահավաքի:

Պոտենցիալ ռիսկերի ցանկում ամենավտանգավորը երկրաշարժն է, որն իր բացասական ազդեցությունն է թողնում թե՛ տնտեսական, և թե՛ սոցիալական կյանքի վրա: Երկրաշարժերի հետևանքով համայնքի որոշ տների, շենք-շինություններին սպառնում է փլուզման վտանգ, քանի որ այդ շինությունները հին են: Խոցելիությունը բարձրանում է նաև բնակչության շրջանում համապատասխան գիտելիքների պակասի պատճառով:

Գարնան ժամանակահատվածում դիտվող սելավները, սողանքները, ուժեղ քամիները, ամպրոպն ու կայծակը պառնալիք են ներկայացնում համայնքի ճանապարհների, բնակելի տների, էլ սարքավորումների համար: Կայծակները կարող են դառնալ նյութական և մարդկային կորուստների պատճառ, ինչը անվտանգության կանոնները չպահպանելու հետևանք է: Ամռան և աշնան ժամանակահատվածում դիտվում են ուժեղ քամիներ, որոնք հիմնականում վնասում են շենք-շինությունների տանիքները, էլեկտրահաղորդալարերը և այլն: Այս երևույթները խախտում են համայնքի բնականոն կյանքը:

Առողջապահական ոլորտում աշնան ժամանակահատվածում սրվում են շնչառական և օդակաթիլային վարակները:

Համայնքի զարգացման համար կարևոր նշանակություն ունի անասնապահությունը: Սակայն համայնքում դիտվող բնածին երևույթները և այլ խնդիրները խոչընդոտում են ոլորտի զարգացմանը և կարող են դառնալ զգալի նյութական կորուստների պատճառ:

Համայնքի եկամտի աղբյուր է համարվում նաև գյուղատնտեսությունը: Աշնանը կատարվում են հացահատիկի, իսկ գարնանը բանջարաբուստանային կուլտուրաների ցանքսի աշխատանքներ, ամռանը և աշնանը՝ բերքահավաքի: Համայնքում դիտվող երևույթները /կարկտահարությունը, ցրտահարությունը, երաշտը, ուժեղ քամիները, սելավը, կայծակները/ խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը և երբեմն դառնում բերքի և անասնակերի մասնակի կամ լրիվ կորստի պատճառ:

Կարկուտի բացասական ազդեցությունը պայմանավորված է հակակարկտային միջոցների բացակայությամբ: Երաշտը պայմանավորված է ոռոգման ցանցի վատ վիճակով և սակավաջրությամբ: Երաշտային տարիներին և սակավաջրության պատճառով մեծանում է






անասունների շրջանում համաճարակների բռնկման հավանականությունը: Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների ռիսկը ավելանում է նաև արոտավայրերում խմոցների բացակայության պատճառով, ինչը նաև ազդում է կովերի կաթնատվության վրա, հետևաբար նաև եկամուտների:

Ցրտահարությունների բացասական հետևանքները անմիջական կապված են կանխատեսաման և ազդարարման մեխանիզմի անկատարելիության հետ, ինչի պատճառով բնակչությունը հնարավորություն չի ունենում ժամանակին կազմակերպելու ցրտահարության դեմ պայքարի միջոցառումներ: Կայծակները կարող են դառնալ անասունների կորստի պատճառ, ինչպես նաև սպառնալիք են ներկայացնում բնակչության համար:

Բնածին երևույթների սպառնալիքներին ավելացել են նաև բույսերի և գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, մկնանման կրծողների, ինչպես նաև վայրի գազանների հետ կապված վտանգները:

Վերջին տարիներին դիտվում է մկնանման կրծողների թվի ավելացում և ակտիվացում՝ հատկապես աշնան ժամանակահատվածում: Մկնանման կրծողները վնաս են հասցնում բանջարաբոստանային, կարտոֆիլի և հացահատիկի ցանքատարածքներին, այգիներին, խոտհարքներին ու արոտավայրերին:

Վայրի գազանները վտանգ են ներկայացնում անասնապահության համար, հատկապես մանր եղջերավոր անասունների և գյուղատնտեսական թռչունների: Համայնքում գրանցվել են ոչխարների հոշոտման դեպքեր: Չի կարելի բացառել նաև գայլերի հարձակումները մարդկանց վրա:

Ժամանակահատված	Բնակչություն	Տուն/շինություն	Ճան/անտառներ	Անասուններ/հողեր	Ինֆրակառույցներ	Վտանգներ/աղետներ
1970				 		
1970-1980	 	 	 	   	 	 Կարկտահարություն
1980-1990	 	 	 	   	 	 Կարկտահարություն, երկրաշարժ, սելավ, ցրտահարություն, ուժեղ քամի, կայծակ
1990-2000	 	 	 	   	 	 Կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամի
2000-2010		 		   	 	 Կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն, սելավ, կայծակ, քարաթափում, սողանք

Ամռան ժամանակահատվածում դիտվող անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները հիմնականում մարդու անփութության, անզգուշության և խոզանների անվերահսկելի այրման

հետևանք են: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները բացասական ազդեցություն են ունենում Էկոհամակարգի վրա: Չոր կլիմայական պայմաններում անտառային հրդեհները կարող են ոչնչացնել անտառներ, խոտածածկ տարածքներ և համակողմանի ու հետևողական պայքարչկազմակերպելու դեպքում այն կարող է հանգեցնել Էկոլոգիական աղետի:

1.5 Պատմական օրացույց

Պատմական օրացույցի օգնությամբ վեր հանվեցին բոլոր այն առանձնահատուկ երևույթներն ու դեպքերը, որոնք իրենց ազդեցությունն են թողել համայնքի կյանքի և զարգացման վրա:

Այն հնարավորություն է ընձեռնել բացահայտել տարիների ընթացքում համայնքի զարգացման վրա ազդեցություն ունեցած դեպքերի պատճառահետևանքային կապը և հասկանալ համայնքի զարգացման միտումները: Պատմական օրացույցը լրացվել է համայնքի բնակիչների հետ միասին:

Խորհրդային տարիներին բնակչությունը զբաղվել է անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությամբ:

Համայնքում վերջին տարիների տեղի ունեցած փոփոխությունների աղյուսակ

Տարի	Նկարագրություն
2007	Բուժկետի տանիքի վերանորոգում <<NOVA>>ծրագրով
2011	Դպրոցի և մանկապարտեզի լուսամուտների վերանորոգում <<Հայրենիք>>միություն
2011	Մանկապարտեզի վերանորոգում <<Փրկեցեք երեխաներին>>
2014	Սմարթ սենյակի հիմնում <<GOAF>>
2014	Կարի արտադրամաս <<DIAKONYA>>
2014	Մշակույթի տան սմարթ սենյակի հիմնում <<JIZ>>
2015	Համակարգչային կենտրոնի հիմնում << JIZ>>
2015	Ծերերի կենտրոնի հիմնում

Ինչ վերաբերում է համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներին. համայնքում մշտապես դիտվել են հետևյալ երևույթները՝ կարկտահարություն, սողանք, սելավ, ցրտահարություն, Երաշտ քարաթափում, ուժեղ քամիներ, առատ տեղումներ, երկրաշարժ: Սակայն վերջին տարիներին նկատվում է երաշտի, կարկտահարության և կայծակի հաճախականության և ուժգնության աճ: Երաշտի հիմնական պատճառը սակավաջրությունն է և ոռոգման ցանցի բացակայությունը որոշ հողատարածքներում:

Բնածին երևույթների սպառնալիքի նպաստը վերականգնման և մկանամանկրծողների հետ կապված վտանգները,

ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների շրջանում բնակվող համաճարակների սպառնալիքը:

Դաշտավարության համար բավականին մեծ վտանգ են ներկայացնում մկանամանկրծողները, որոնց քանակը կտրուկ ավելացել է: Պատճառը նրանում է, որ 25-30 տարի առաջ գյուղացիական տնտեսություններում

ձեռնարկվում էին մկնամնանկրծողների դեմ պայքարի համալիր միջոցառումներ, որոնք հնարավորություն էին տալիս նվազեցնել լորանցքանակը:

Հիմա այս պայքարի արոցները խաթարվել են, ինչն էլ հանգեցրել է մկնամնանկրծողների քանակի ավելացմանը:

Վերջին ժամանակահատվածում մտահոգիչ են դարձել նաև հատկապես խոշոր եղջերավոր անասունների շրջանում գրանցված վարակների դեպքերը: Բնակչությունը կրում է մեծ նյութական կորուստներ, ինչպես նաև մեծացել է բնակչության շրջանում այդ վարակների տարածման սպառնալիքը:

Ուրվագծի և պատմական օրացույցի համադրությունից երևում է, որ

- ✓ Խորհրդային միության փլուզումը, երկրաշարժը և սոցիալ-տնտեսական ճգնաժամը, իրենց բացասական հետևանքն են ունեցել համայնքի համար. նվազել է աշխատատեղերի քանակը, դիտվել է արտագաղթ, մեծացել է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Սակայն համայնքում դեռ մնացել է մարդկային ներուժ, ինչը լուրջ կարողություն է հանդիսանում համայնքի զարգացման համար,
- ✓ համայնքի բնակիչների կողմից անասնապահության, պտղաբուծության և այգեգործության զարգացման հնարավորությունները նշվեցին որպես բնակչության թվաքանակի չպակասելու կարևոր հանգամանք,
- ✓ համայնքում ոռոգման համակարգի բարելավումը, վերամշակող արտադրամասերի և մթերման կետերի, ջերմոցների և սառնարանների հիմնումը, ինչպես նաև կենսական կարևոր համակարգերի բարելավումը լավ նախադրյալ է աշխատատեղերի ստեղծման, աղքատության նվազեցման ու բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:
- ✓ համայնքում հիմնական փոփոխությունները կապված են կառույցների և ենթակառույցների վերանորոգման հետ:

Համայնքային խնդիրները լուծելու նպատակով տեղական իշխանությունն ակտիվորեն համագործակցում է պետական և միջազգային կազմակերպությունների հետ:

1.6 Զննարկումներ ֆոկլուս խմբերում


Ֆոկլուս խմբերը ձևավորվել է համանքի ղեկավարի և հիմնական դերակատարների աջակցությամբ: Ֆոկլուս խմբերում ներգրավվել են համայնքի, առողջապահական և կրթական ոլորտի ներկայացուցիչներ:

Ֆոկլուս խմբից ստացված տեղեկատվությունը դասակարգվել է երեք հիմնական ուղղություններով՝ խոցելիություն, վտանգներ և կարողություններ:


	Խոցելիություն
Առողջապահական ոլորտ	Առողջապահական ոլորտում խոցելիության բարձրացմանը նպաստում է որոշ բուժ. սարքավորումների, շտապ օգնության մեքենայի, կոյուղու և ջրի վատ վիճակը:
Կրթական ոլորտ	Համայնքի կրթական համակարգը ներառում է միջնակարգ կրթության բնագավառը: Ունի խնդիրներ կապված բուժկետի, լաբորատոր նյութերի սարքավորումների, տանիքի, ջրամատակարարման ցանցի: Հարկ է նշել, որ տանիքը ասբեշիֆերից է: Այս ամենը բարձրացնում է դպրոցի շենքի խոցելիությունը և վտանգի տակ է դնում անձնակազմի առողջական վիճակը: Խոցելիությունը բարձրանում է նաև

աղետներին և արտակարգ իրավիճակներին դիմակայելու ունակությունների, գործիքների և մեխանիզմների բացակայության հետևանքով:

Ըստ դպրոցի տնօրինության դպրոցն ունի տարիանման պլան, որը փակցված է յուրաքանչյուր մասնաշենքում, յուրաքանչյուր հարկում: Ռեուցիչների և աշակերտների պատասխանները տարիանման պլանի վերաբերյալ երևում են ստորև բերված գրաֆիկներում:



աշխատակազմ



աշակերտներ

Հարկենշել, որդպրոցումկանփակցվածտարիանմանուղիներընշողցուցանակներ:
Դպրոցումկազմակերպվումենուումնականտարիանումներ:
Ինչվերաբերվումենախաղադպրոցականկրթությանը,
ապահամայնքումկամանկապարտեզ, որըգտնվումէհամայնքապետարանիշենքում:
Ունիվերսալորոգմանկարիք:

Վտանգ

Առողջապահական ոլորտ

Բուժկետի շենքի համար վտանգ նշվեցին ուժեղ քամիները և սելավները:

Բուժաորքավորումների, դեղորայքի, շտապ օգնության մեքենայի, պակասը խոչընդոտ են հանդիսանում աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Այս խնդիրները վտանգի տակ են դնում բնակիչների առողջական վիճակը:

Կրթական ոլորտ

Բնածին երևույթներից դպրոցի համար առավել մեծ վտանգ են ներկայացնում սողանքը, սելավը, առատ տեղումները, կարկտահարությունը, երկրաշարժերը: Մարդածին բնույթի վտանգներից դպրոցի համար սպառնալիք են ներկայացնում անտառային հրդեհները, խոտածածկ տարածքների հրդեհները, ճանապարհատրանսպորտային պատահարները: Երկրաշարժը և հրդեհները առավել մեծ վտանգ են ներկայացնում դպրոցի անձնակազմի համար, ինչը հիմնականում այդ երևույթներին դիմակայելու ունակությունների, գործիքների և մեխանիզմների բացակայության հետևանք է:

Դպրոցի շենքային պայմանների հետ կապված խնդիրները՝ սանհանգույցների վիճակը, ինչպես նաև հիմնանորոգման հետ կապված վտանգ են ներկայացնում անձնակազմի և երեխաների առողջության համար:

Հարկ է նշել որ, դպրոցի տարածքով անցնում է բարձր լարման հաղորդալարեր: Դպրոցի տարածքին մոտ անցնում է ավտոճանապարհի ինչը վտանգ է ներկայացնում երեխաների համար:

Երեխաների և մեծահասակների շրջանում չկա բավարար գիտելիքներ և հմտություններ աղետներին դիմակայման ոլորտում: Գիտելիքների ձեռքբերման համար ուսուցիչներին առաջարկում են ուսումնական դասընթացներ անցկացնել:

Կարողություն

Կրթական ոլորտ	Դպրոցնունի հալոցքաշերտի և անձրևաշերտի հեռացման համակարգ: Ազդարարման միջոցներից ունի էլեկտրական զանգ: Հակահրդեհային պաշտպանությամբ միջոցներից ունի բահեր և կրակմարիչներ, որոնց պիտանելիությունը՝ ըստ տնօրինության, ստուգվում է տարին 1 անգամ համապատասխան մարմինների կողմից: Հարկ է նշել որ դպրոցն հարմարեցված է հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն աշակերտների հատուկ կարիքներին:
Առողջապահական ոլորտ	Բուժկետի անձնակազմը և համայնքի ՏԻՄ-ի պատրաստակամություն հայտնեցին աջակցելու ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի իրականացմանը:

Ֆոկուս քննարկումների ընթացքում մասնակիցների եզրակացմամբ վերհանած խնդիրները անմիջապես անորեն ազդում են համայնքի կենսամակարդակի և զարգացման վրա, և այդ խնդիրների լուծման կամ մասնակի լուծման դեպքում համայնքը կունենա դրական ձեռքբերումներ՝ աղքատության նվազում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, ծնելիության աճ, աշխատատեղերի ստեղծում, բերքատվության աճ, եկամտի բարձրացում, մշակվող հողամասերի ավելացում, անասնապահության զարգացում, արտագաղթի նվազում, երեխաների առողջական վիճակի բարելավում, կրթության որակի բարձրացում, մարդկանց առողջական վիճակի բարելավում և այլն: Այդամենը կնպաստի համայնքի զարգացմանը և բարգավաճմանը:

1.7 Կիսակառուցվածքային հարցազրույցներ

Հաշվի առնելով, որ հարցազրույցները հիմնված են յուրահատուկ գիտելիքների և փորձի վրա, կիսակառուցվածքային հարցազրույցները իրականացվեցին համայնքի գյուղապետի և ավագանու անդամների հետ:

Հարցազրույցների ընթացքում ստացված տեղեկությունը դասակարգվել է հետևյալ ուղղություններով:

1.7.1 Արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու համայնքի կարողությունները

Հարցազրույցների արդյունքում բացահայտվել են համայնքում առկա հետևյալ կարողությունները

- ✓ տարահանման պլան,
- ✓ աղետներին արձագանքման պլան,
- ✓ արագ արձագանքման խումբ:

Որպես ԱԻ-ին դիմակայելու կարողություններ նշվեցին նաև համայնքում առկա որոշակի տեխնիկական, խմելու ջրագիծը, խանութները, հանքային աղբյուրների առկայությունը, տրանսպորտային միջոցները:

Արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու դպրոցի կարողությունները

Դպրոցի տնօրենի հետ անց կացված հարցազրույցի ընթացքում բացահայտվել են դպրոցում առկա հետևյալ կարողությունները.

- ✓ տարահանման պլան,
- ✓ տարահանման նշաններ,
- ✓ էլեկտրական զանգ,
- ✓ բջջային հեռախոսակապ,
- ✓ հնտեռնետ

1.7.2 Համայնքում վերջին տարիներին տեղի ունեցած ԱԻ-ը և դրանց հետևանքները:

Համայնքում տեղի ունեցած բնական երևույթների և արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվությունը դասակարգվել է, որի արդյունքները պատկերված է աղյուսակում:

ՏԱՐԵԹԻՎ	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ	ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
1979	Կարկտահարություն	Վնասվել են շենք-շինությունները և բերքը:
1988	Երկրաշարժ	Վնասվել են շենք-շինությունները:
2000	Երաշտ	Բերքի կորուստ:
2009	Կարկտահարություն	Բերքի կորուստ:
2010	Կարկտահարություն	Բերքի կորուստ:
2013	Կարկտահարություն	Բերքի կորուստ:
2015	Երաշտ	Բերքի կորուստ:
Պարբերաբար	Սելավ	Համայնքի տեղադիրքի պատճառով հորդառատ անձրևների և ինտենսիվ ձնհալի հետևանքով առաջանում են սելավային հոսքեր, որոնք դառնում են հեղեղումների պատճառ: Վնասվում են ճանապարհները, տնամերձ տարածքները, այգիները: Վնասող է ներկայացնում նաև ջրամատակարարման խողովակների համար:

Հարկ է նշել, որ համայնքի տարածքում մառկա է սողանքային գոտի:

Ըստ ստացված տեղեկությունների, դպրոցը որևիցե բնական երևույթի կամ արտակարգ իրավիճակի հետևանքով չի տուժել:

1.8 Չանգվածային հարցում բնակչության շրջանում հարցաթերթիկների միջոցով

Չանգվածային հարցմանը մասնակցել են համայնքի 118 բնակիչ, որի արդյունքում հավաքագրվեցին տեղեկություններ

- ✓ համայնքին սպառնացող վտանգների իմացության,
- ✓ համայնքի խոցելի տարրերի ու կարողությունների իմացության,
- ✓ ԱՐՆ ոլորտի հիմնական դերակատարների,
- ✓ արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու պատրաստվածության,
- ✓ իր ներուժը ԱՐՆ միջոցառումների պլանավորման և իրականացման գործում ներդնելու բնակչության պատրաստակամության,
- ✓ ԱՐՆ միջոցառումներին մասնակցության և շահագործության վերաբերյալ:

Դպրոցի ուսումնասիրության մասնակցել են տնօրեն, 3 ուսուցիչ և 5 աշակերտ:

Ուսումնասիրության նպատակն էր պարզել արտակարգ իրավիճակներին՝ դպրոցի անձնակազմի և աշակերտների պատրաստվածության աստիճանը, աղետներին արձագանքման դպրոցի կարողությունները և իրազեկվածությունը համայնքին և դպրոցին սպառնացող վտանգների վերաբերյալ:

Չանգվածային հարցումներից հավաքագրված տեղեկությունները դասակարգվել են, որի արդյունքները բերված են ստորև:

1.8.1 Համայնքին սպառնացող հիմնական վտանգավոր երևույթները՝ ըստ համայնքի բնակչության:


Վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթների (կարկտահարություն, ուժեղ քամիներ, ցրտահարություն) ուժգնացման և հաճախականության աճի միտումներ:

Ինչը նաև վկայում են պաշտոնական տվյալները առ այն, որ վերջին տասնամյակներում նկատվում են հիդրոոգերևութաբանական վտանգավոր երևույթների (ՀՎԵ) աճի միտումներ: Վերջին 30 տարվա ընթացքում ՀՎԵ դեպքերի գումարային քանակը աճել է 1.2 դեպքով, իսկ վերջին 20 տարում տարեկան 1.8 դեպքով:

Բնածինվտանգավորերևույթները և դրանց բացասական հետևանքները մեծ ազդեցություն ունեն մարդու բարեկեցության և տնտեսության զարգացման վրա: Բնականվտանգավորերևույթներըըստեությանչենառաջացնումաղետներ, քանիդեռչենգուգակցվումհասարակությանխոցելիությանհետ:

Կլիմայական այս երևույթների ուղղակի հետևանքն է նաև եղանակային կտրուկ փոփոխությունների ավելացումը, որն, ըստ բազմաթիվ հետազոտությունների, ռիսկի գործոն է ամենատարբեր ոլորտների համար՝ առողջապահական, գյուղատնտեսական, էներգետիկ և այլն:

Հարցման մասնակիցների բնածին վտանգավոր երևույթների վերաբերյալ պատասխանների պատկերը ներկայացված է գրաֆիկում:




Բնակչության շրջանում բնական վտանգավոր երևույթների վերաբերյալ ստացված տեղեկություն

Բնածին երևույթներից առավել շատ նշվեցին

կարկտահարությունը, սողանքը, սելավը, քարաթափումները:

Բացի այդ երևույթներից նշվեցին նաև այլ երևույթներ՝ երաշտ, երկրաշարժ, ուժեղ քամիները, առատ տեղումները, կայծակը, ցրտահարությունը: Հենց այս երևույթներն են դարձել համայնքի բնականոն կյանքի խախտման և կյուրթական կորուստների պատճառ:

Դպրոցին սպառնացող բնածին վտանգավոր երևույթների վերաբերյալ դպրոցի ուսումնասիրության մասնակիցների պատասխանների պատկերը ներկայացված է գրաֆիկում:



Բացի բնածին երևույթներից նշվեցին նաև այլ երևույթներ, որոնք սպառնալիք են ներկայացնում համայնքի համար: Դրանք են՝ հրդեհները և հանկարծակի փլուզումները:

Շատ հաճախ բնական վտանգների և վտանգավոր երևույթների ազդեցությունը հանգեցնում է մարդու բնակության միջավայրի որակական փոփոխությունների և շատ դեպքերում՝ աղետալի հետևանքների:

Յուրաքանչյուր բնական վտանգավոր երևույթ՝ կախված տեսակից, բնույթից, մասշտաբից, թողնում է ամենատարբեր հետևանքներ, որոնց շրջանակները պայմանավորված են խոցող գործոններով՝ խոցման դաշտերով, տեղական պայմաններով, խոցելի տարրերով, որոնցից էլ կարող են առաջանալ նոր վտանգավոր երևույթներ:

Վերջին տարիներին մասնավորապես արձանագրել են ջերմաստիճանի նվազում գարնան ամիսներին, ինչի հետևանքով աճել են ցրտահարության դեպքերի թիվը, և ջերմաստիճանի բարձրացում ու տեղումների սակավություն ամռան ամիսներին, ինչի հետևանքով աճել է երաշտային տարիների թիվը:

Չանգվածային հարցումից և կիսակառուցվածքային հարցազրույցներից ստացված տեղեկությունները դասակարգվել են ըստ առաջնայնության, որի արդյունքները բերված են աղյուսակում:

Համայնքի նսպառնացող հիմնական վտանգավոր երևույթների աղյուսակը:

ԵՐԵՎՈՒՅԹ		ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
1	Սողանք	Համայնքում առկա են սողանքային տեղամասեր: Սողանքները սպառնալիք են ներկայացնում համայնքի ճանապարհների, հողատարածքների, այգիների և շենք-շինությունների համար: Սողանքավտանգ գոտում կան նաև բնակելի տներ: Սողանքների ակտիվացմանը նպաստում են հատկապես առատ տեղումները: Միջին հաշվով՝ տարվա ընթացքում աղետալի կարկտահարումը տեղի է

		ունենում 2-3 անգամ, մյուսները՝ 4-5 անգամ: Կարկուտից պատճառված վնասներն շատ են, քանի որ մրգի ու բանջարեղենի ծաղկման ու հասունացման ժամկետը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ: Կարկտահարությունը առավել վտանգավոր արհավիրք է այգիների համար, հաճախ մեծ վնաս պատճառելով ապագա բերքին: Այն հիմնականում տեղի է ունենում ծաղկման շրջանում, երբեմն ավելի ուշ՝ բերքահավաքի ժամանակաշրջանում: Հարկ է նշել, որ կարկտահարության հետևանքով վնասվում են նաև շենք-շինությունների տանիքները, լուսամուտները տրանսպորտային միջոցները:
2	Քարաթափում	Համայնքի համար մեծ վտանգ են ներկայացնում քարաթափումները: Մեծ վնասներ է հասցնում ճանապարհներին և մարդկանց:
3	Սելավ	Համայնքի տեղադիրքի, հեղեղատարների և սելավատարների բացակայության պատճառով՝ ձնհալի ու առատ տեղումների հետևանքով առաջացած սելավային հոսքերը ողողում են համայնքի միջհամայնքային ճանապարհները, հողատարածքները, լցվում տնամերձ տարածքներ և տներ: Սելավը մեծ վնասներ է պատճառում նաև այգիներին և հողատարածքներին:
4	Կարկտահարություն	Միջին հաշվով՝ տարվա ընթացքում աղետալի կարկտահարումը տեղի է ունենում 2-3 անգամ, մյուսները՝ 4-5 անգամ: Կարկուտից պատճառված վնասներն շատ են, քանի որ մրգի ու բանջարեղենի ծաղկման ու հասունացման ժամկետը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ: Կարկտահարությունը առավել վտանգավոր արհավիրք է այգիների համար, հաճախ մեծ վնաս պատճառելով ապագա բերքին: Այն հիմնականում տեղի է ունենում ծաղկման շրջանում, երբեմն ավելի ուշ՝ բերքահավաքի ժամանակաշրջանում: Հարկ է նշել, որ կարկտահարության հետևանքով վնասվում են նաև շենք-շինությունների տանիքները, լուսամուտները տրանսպորտային միջոցները:
5	Ուժեղ քամիներ	Քամիները բնորոշ են տարածաշրջանին: Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում համայնքի տներին ու շենք-շինություններին, էլեկտրահաղորդակցման համակարգին: Քամիները մեծ վնասներ են պատճառում շենք-շինությունների տանիքներին, էլեկտրահաղորդակցման համակարգին, նաև գյուղատնտեսական ոլորտին:
6	Ցրտահարություն	Տարածաշրջանի գյուղատնտեսության համար բավականին մեծ վտանգ են ներկայացնում ցրտահարությունները: Վերջին տարիներին դիտվում են ցրտահարման դեպքերի հաճախացում գարնան ժամանակահատվածում: Ցրտահարության դեպքերը շարունակաբար մեծացնում են գյուղատնտեսական վնասները՝ վտանգի տակ դնելով համայնքի տնտեսական և սոցիալական բարեկեցությունը: Ցրտահարությունը և նրա հետևանքները դժվարություններ են ստեղծում հատկապես անհատների համար: Հիմնականում ցրտահարությունը վնասում է մրգի, պտղի և բանջարանաբուստանային կուլտուրաների բերքը:
7	Երաշտ	Երաշտի նախապայմաններից է, երբ ամռան ժամանակահատվածում մշակաբույսերի ինտենսիվ ոռոգման շրջանում դիտվում է տեղումների սակավություն և չի իրականացվում արհեստական ոռոգում: Համայնքի

		ոռոգման ցանցի հետ կապված խնդիրների պատճառով դժվարանում է ոռոգման կազմակերպումը: Համայնքի ցանքատարածքների մի մասում չկա ոռոգման ցանց, ուստի դժվարանում է ոռոգման կազմակերպումը: Երաշտից հատկապես շատ են տուժում հացահատիկային և բանջարանոցային կուլտուրաները, որոնք այդ ժամանակահատվածում գտնվում են հասկակավման և ծաղկման փուլում:
8	Առատ տեղումներ	Համայնքի բնորոշ են առատ տեղումներ, հատկապես ձյան և անձրևի տեսքով: Վերջին տարիներին ավելացել են անակարկուտի դեպքերը: Առատ տեղումները դառնում են սելավների առաջացման պատճառ: Վնասում են ճանապարհներին, բնակելի տներին, շինություններին, տնամերձերին:
9	Կայծակ	Ամպրոպներն ու կայծակները համայնքում միշտ էլ դիտվել են: Ամպրոպն ու կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը, դառնալով էլեկտրասարքավորումների վնասման պատճառ:
10	Երկրաշարժ	Երկրաշարժը անկանխատեսելի երևույթ է և սպառնում է ամբողջ Հայաստանի տարածքին: Շինությունների վիճակի պատճառով երկրաշարժը կարող է դառնալ նյութական և մարդկային կորուստների պատճառ: Կարող է դառնալ նաև համայնքին բնորոշ այլ երևույթների /տոհմաբնակչության, քարաթափում/ և արտակարգ իրավիճակների /պայթյուն, հրդեհ/ պատճառ:

Բացի բնածին երևույթներից նշվեցին ևս և այլ երևույթներ, որոնք սպառնալիք են ներկայացնում համայնքի համար: Դրանք են՝ մկանամանկրծողները, վայրի գազանները, համաճարակները և անտառային ու խոտածածկ տարածքների հրդեհները:

Հողագործության, հատկապես դաշտավարության համար վտանգ են ներկայացնում մկանամանկրծողները: Համատարած պայքարի բացակայության պատճառով դրանց թիվը աճել է, հետևաբար աճել է նաև պատճառած վնասները: Կրծողները վնաս են հասցնում հատկապես հացահատիկի և բանջարաբուստանային հողատարածքներին և այգիներին:

Վայրի գազանների և երկաթուղային տնակների զրկումը պայթյունների հետևանքով, ինչը մտահոգության պատճառ է բնակչության շրջանում:
Չեն բացառվում գազանների հարձակումները և բնակիչների վրա, քանի որ համայնքում մանկապարտեզներ գտնվում են:

Համայնքի գյուղատնտեսական կենդանիների համար բավականին լուրջ վտանգ են ներկայացնում համաճարակները, որը կանխարգելիչ միջոցառումների բացակայության հետևանք է:

Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները հիմնականում մարդու անփութության, անզգուշության և խոզանների անվերահսկելի այրման հետևանք են: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները բացասական ազդեցություն են ունենում էկոհամակարգի վրա: Չոր կլիմայական պայմաններում անտառային հրդեհները կարող են ոչնչացնել անտառներ, խոտածածկ տարածքներ և համակողմանի ու հետևողական պայքար չկազմակերպելու դեպքում այն կարող է հանգեցնել էկոլոգիական աղետի:


1.8.2 Վտանգավոր երևույթների սեզոնայնություն

Տարածաշրջանի կլիմայի կարևոր առանձնահատկությունը եղանակային պայմանների արտահայտված տատանումներն են ինչպես տարեց տարի, այնպես էլ տարվա ընթացքում:

Սեզոնայնության ուսումնասիրությունը ի հայտ է բերում համայնքին սպառնացող վտանգավոր երևույթներին բնորոշ ժամանակահատվածները, ինչը հնարավորություն է տալիս՝ անդրադառնալով անցյալին, բացահայտել երևույթների հետ կատարվող փոփոխությունները և միտումները:

Օդերևութաբանական դիտարկումների տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում վերջին 80 տարիների կտրվածքով դիտվել է տարեկան ջերմաստիճանի աճ 0.85°C -ով և տեղումների նվազում 6-8%-ով: Ջերմաստիճանի և տեղումների փոփոխությունները ՀՀ տարածքի տարբեր շրջաններում և տարբեր սեզոններում ունեն տարբեր միտումներ:

Թումանյան համայնքում առավել հաճախ դիտվող վտանգավոր երևույթների սեզոնայնության վերաբերյալ պատկերը բերված է ստորև:



Բնակչության շրջանում բնական վտանգավոր երևույթների սեզոնայնության վերաբերյալ ստացված տեղեկություն

Սեզոնայնության ուսումնասիրության վերլուծությունը ցույց տվեց, որ համայնքի բնակչության տեսակետից

համայնքի նսպառնացող բնական երևույթների ռիսկերը առավել շատ նկատվում են գարուն-ամառ ժամանակահատվածում: Այդ ժամանակահատվածում դիտվող երևույթները դառնում են կորուստների պատճառ գյուղատնտեսական ոլորտում, որը համայնքի եկամտի հիմնական աղբյուրն է, ինչպես նաև մեծ վնասներ են հասցնում համայնքի բնակֆոնդին, ենթակառուցվածքներին և կենսական կարևոր համակարգերին:

Հարկենշելնա, որ ամառ-աշուն ժամանակահատվածում մակտիվանում են հատկապես հացահատիկի, բանջարանաբուստանային կուլտուրաների, հողատարածքներին ալգիների համար վտանգ ներկայացնող մկանման կրծողները:

Սեզոնային տատանումները յուրաքանչյուր տարի սովորաբար ունեն հերեց առանձնահատկությունները: Որոշ երևույթներ և պրոցեսներ տարվա ընթացքում ենթարկվում են սեզոնային փոփոխությունների, որոնք կարող են պայմանավորված լինել տարվա եղանակի հերթափոխմամբ, կլիմայի փոփոխության ազդեցությամբ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական տարբեր գործոններով:


Սեզոնային տատանումները առավելակնառու կերպով արտացոլվում են գյուղատնտեսության մեջ, որտեղ, օրինակ, բուսաբուծության մթերքների մեծ մասը ստացվում է միայն որոշակի ամիսների: Դա իր հերթին սեզոնային տատանումներ է առաջացնում գյուղատնտեսական հումքի շահագործման արկունների և արտադրամասերի աշխատանքներում: Սեզոնային տատանումները հաճախ հանգեցնում են տարբեր տեսակի անցանկալի արդյունքների, հատկապես արտադրանքի նվազման:

Սեզոնայնության ուսումնասիրությունը անհրաժեշտ է, որպեսզի վտանգավոր երևույթների սեզոնային տատանումները, քանի որ երբեմն դրանց վերացնելը հնարավոր չէ:

1.8.3 Վտանգավոր երևույթների հաճախականությունը

Համաշխարհային վիճակագրությունը վկայում է, որ տարեցտարի աճում է հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների հաճախականությունը: Աշխարհում տարեկան մարդկային զոհերի 40% պայմանավորված է հենց հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներով: Վտանգավոր երևույթների հաճախականության ուսումնասիրությունից երևում է, որ Հայաստանում հաճախակի են դարձել հատկապես վտանգավոր օդերևութաբանական բնույթի երևույթները:

Բնակչության շրջանում վտանգավոր երևույթների հաճախականության վերաբերյալ ստացված տեղեկությունների պատկերը երևում է ստորև բերված գրաֆիկից:



Բնակչության շրջանում բնական վտանգավոր երևույթների հաճախականության վերաբերյալ ստացված տեղեկություն

Քննարկումների և հարցման ընթացքում պարզ դարձավ, որ բնակչության մեծ մասը ավելի շատ ուշադրություն է դարձնում և վտանգավոր է համարում այն բնածին երևույթները, որոնք դարձել են կամ կարող են դառնալ նյութական կորուստների և բնականոն կյանքի ընթացքի խախտման պատճառ: Այդ երևույթներից հատկապես առանձնացվեցին կարկտահարությունը, սելավը, և ցրտահարությունը:


Վերջին տարիներին եղանակային փոփոխությունները դարձել են ակնհայտ: Այդ փոփոխությունները ուղեկցվում են բնական աղետների հաճախականության ավելացմամբ: Եղանակային փոփոխությունները լրջորեն ազդում են բուսական և կենդանական աշխարհի վրա: Այն առավել ճգնաժամային է արտահայտվել գյուղատնտեսության , մշակույթի վարման գործընթացների վրա: Ջերմաստիճանի բարձրացումը, մթնոլորտային տեղումների պակասելը, հաճախակի դարձած կարկտահարությունները, երաշտներն ու ցրտահարությունները բացասական ազդեցություն են ունենում մշակաբույսերի բերքատվության, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության վրա:

1.8.4

Համայնքում տեղի ունեցած արտակարգ իրավիճակներից բնակչության կողմից կրած վնասները

Հարցման մասնակիցների 41%-ը անմիջական վնաս է կրել համայնքում տեղի ունեցած փոքրամասշտաբաղետներից և արտակարգ իրավիճակներից:

Վերջիններիս հետևանքով իմնականում տուժել է գյուղատնտեսական ոլորտը և բնակելի ֆոնդը: Եղած կորուստները և վնասները նյութական են, ինչը հանգեցրել է սոցիալական վիճակի վատթարացմանը:




Համայնքում տեղի ունեցած աղետների և արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչության կողմից կրած վնասների վերաբերյալ ստացված տեղեկություն

Ըստ բնակիչների՝ թերի են կամ բացակայում են նաև հատուկ ուղղվածության մասնագիտացված տեղեկատվության և կանխատեսումների պատրաստման և տարածման մեխանիզմները:

1.8.5 Վտանգների և խոցելիության համադրությունը

Յուրաքանչյուր վտանգ ունի իրեն բնորոշ խոցելիություններ, որոնք առանձնահատուկ են




կոնկրետ տարածքի համար, ուստի և տարբեր են՝ կախված երկրից, մարզերից, համայնքներից կամ անհատներից: Խոցելիության պատճառները հետևանք են ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և քաղաքական-ինստիտուցիոնալ թուլությունների:

Ստորև բերված գրաֆիկից երևում է, թեբնակչության կարծիքով, համայնքին հատուկ ինչպիսի վտանգավոր երևույթներն են կենսական կարևոր համակարգերի, ինֆրակառույցների, շինությունների և գյուղ նշանակության օբյեկտների համար իրական սպառնալիք հանդիսանում:

Բնակչության շրջանում սպառնացող վտանգներից համայնքի խոցելի տարրերի վերաբերյալ ստացված տեղեկություն

Ստացված պատկերից կարելի է եզրակացնել, որ համայնքի բնորոշ բնական վտանգավոր երևույթներից առավել խոցելի են այգիները, ցանքատարածքները, անասունները և բնակելի տները:




Բնակչության շրջանում համայնքի խոցելի շինությունների վերաբերյալ ստացված տեղեկություններ

Համայնքի խոցելի շինությունների վերաբերյալ հարցման մասնակիցների պատասխանների պատկերը երևում է գրաֆիկից: Ըստ հարցման արդյունքների, արտակարգ իրավիճակների ինկատմամբ առավել խոցելի են նշվել դպրոցի, մանկապարտեզի շենքերը և բնակելի տները:

Դպրոցը համայնքի մարդկային մեծ կուտակումներով օբյեկտ է:
Այս տեղեր եխաների մեծ զանգված անցեկացնում իր կյանքի /1-12 տարի/ և ժամանակի /օրվա 6-8 ժամ/ զգալի մասը: Հետևաբար, դպրոցի կարևոր խնդիրներից է աշակերտի և աշխատակազմի անվտանգության ապահովումը դպրոցի սահմաններում, ինչու ոչ նաև նրանից դուրս:


Համայնքի խոցելիության աստիճանը բարձրանում է նաև արտակարգ իրավիճակների ժամանակ վարքական ունենքի վերաբերյալ իմացության բացակայության հետևանքով:



Հաջորդ գրաֆիկը ցույց է տալիս ԱՄՀ-ի նկատմամբ մարդկանց առավել խոցելի խմբերը: Բնակչության առավել խոցելի խմբերի վերաբերյալ գրաֆիկից երևում է, որ տվյալի համայնքում առավել խոցելի խումբ են համարվել հաշմանդամները: Հարցման ժամանակ նշվել է, որ գրաֆիկում ներառված բոլոր խմբերի խոցելիության աստիճանը կնվազի կամ կաճի՝ կախված վերջիններիս առողջական վիճակի և իրազեկվածության մակարդակի փոփոխությունից:

Արտակարգ իրավիճակների և աղետների սպառնալիքների դեպքում կարող են առաջանալ գործոններ, որոնց ազդեցությունը վտանգավոր է երեխաների կյանքի և առողջության համար: Ցուրաքանչյուր դպրոցի անձնակազմն ու այնտեղ սովորող երեխաները պետք է գիտակցեն իրենց կյանքին սպառնացող վտանգները և պատրաստ լինեն համապատասխան քայլեր ձեռնարկել վերահաս և փաստացի վտանգի դեպքում: Ուսուցիչի շատ կարևոր է, որ նման իրավիճակներում թե դպրոցի անձնակազմը թե աշակերտները թե ծնողները կարողանան ճիշտ գործել, իրականացնել տարիանում, ցուցաբերել առաջին օգնություն և հոգեբանական աջակցություն:

Ուսումնասիրվել է նաև տարբեր ծառայությունների հասանելիության աստիճանը: Հարցվողների մեծ մասը ծառայության հասանելիությունը կապում էր համայնքի տեղադիրքի և ճանապարհների որակի հետ:



Բնակչության շրջանում համայնքի ծառայությունների հասանելիության վերաբերյալ ստացված տեղեկություններ

Հարկ է նշել, որ հարցվողները ծառայությունների հասանելիության աստիճանը կապում էին նաև ֆինանսական խնդիրների և ենթակառուցվածքների վիճակի հետ:

Հարկ է նշել, որ հատուկ ծառայությունների ավտոմեքենաների մոտեցման համար ազատ են դպրոցամերձ ուղիները:

1.8.6 Աղետներին դիմակայելու վերաբերյալ համայնքի բնակչության գիտելիքները

Համայնքի պաշտպանության համար կենսականորեն կարևոր գործոն է աղետներին դիմակայելու և արձագանքելու տեղական կարողությունը, որն արտահայտվում է տեղում առկա արձագանքման գործիքներով և մեխանիզմներով, տեխնիկական միջոցներով և բնակչության պատրաստվածության մակարդակով:


Հարցազրույցների և հարցման ընթացքում պարզվեց, որ բնակչության և տեղական իշխանության շրջանում կա համայնքում առկա կարողությունների կիրառման և շահագործման վերաբերյալ գիտելիքների պակաս:

Համայնքը առաջինն է առնչվում աղետներին: Նմանատիպ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու համայնքի հնարավորությունը կախված է բնակչության և տեղական իշխանության գիտելիքների և հմտությունների մակարդակից: Բնակչության շրջանում գիտելիքների ու հմտությունների պակասը էական ազդեցություն ունի համայնքի խոցելիության մակարդակի վրա:

Աղետներին դիմակայելու և արձագանքելու մակարդակը պարզելու նպատակով՝ ուսումնասիրվեց համայնքի բնակչության ինքնագնահատականը աղետներին պատրաստվածության վերաբերյալ:

Նախապատրաստումը սկսվում է տեղեկատվությունից և այն տրամադրելու հնարավորություններից:

Հարկենշել, որ տեղեկատվության տրամադրման հիմնական միջոցներից համայնքին հասանելի են հանրային և արբանյակային հեռուստատեսությունները, ինտերնետը և մամուլը: Տեղեկատվական աղբյուրների հասանելիությունը երևում է գրաֆիկից:



Բնակչության շրջանում տեղեկատվական աղբյուրների վերաբերյալ ստացված տեղեկություններ

Հարցվածների գերակշիռ մասը նշել է, որ միանգամից օգտվում է տեղեկատվության մի քանի աղբյուրներից: Տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը հանրային հեռուստատեսությունն է: Ինտերնետը որպես տեղեկատվական աղբյուր ավելի հասանելի է դարձել: Արբանյակային հեռուստատեսությունը նույնպես տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրներից է:

Տեղեկատվական աղբյուրներից դպրոցին հասանելի է ինտերնետը:


Դպրոցի աշխատակազմի և աշակերտների համար երբևիցե չեն կազմակերպվել աղետներին և արտակարգ իրավիճակներին նախապատրաստվելու, արձագանքելու և դիմակայելու դասընթացներ:

Մարդկանց աղետներին նախապատրաստվածության և դիմակայելու կարողություններից է կախված աղետներին արձագանքման տեղական մակարդակը:

Արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ գիտելիքների և


Դպրոցի աշխատակազմի և աշակերտների արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ գիտելիքների և ունակությունների ինքնագնահատականի պատկերը երևում է գրաֆիկներից:

Դուք ծանոթ եք առաջին օգնության հիմունքներին:



աշխատակազմաշակերտներ

Դուք ծանոթ եք հակահրդեհային անվտանգության կանոններին:



աշխատակազմաշակերտներ


Դուք ծանոթ եք արտակարգ իրավիճակների ժամանակ վարքականոններին:



աշխատակազմաշակերտներ

Գրաֆիկներից երևում է, որ դպրոցի անձնակազմի և աշակերտների գերակշիռ մասը չունեն համապատասխան գիտելիքներ և ունակություններ արտակարգ իրավիճակներում գործելակերպի, հակահրդեհային պաշտպանության և առաջին օգնության վերաբերյալ, ինչը բարձրացնում է խոցելիությունը:


ունակությունների ինքնագնահատականի պատկերը երևում է գրաֆիկից, ըստ որի արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ գիտելիքներին և ունակություններին ծանոթ են՝ 13%-ը, մասամբ ծանոթ են՝ 25%: Հարցվողների 62%-ը չունեն արտակարգ իրավիճակներում առաջին օգնության վերաբերյալ, ինչը բարձրացնում է համայնքի խոցելիության աստիճանը:




Բնակչության շրջանում արտակարգ իրավիճակներում գործելակերպի և առաջին օգնության վերաբերյալ ստացված տեղեկություններ

Համայնքի բնակչության և տեղական իշխանության ԱԻ-ին դիմակայելու և արձագանքելու պատրաստ լինելու վերաբերյալ հարցվողների կարծիքը արտացոլված է ստորև բերված գրաֆիկներում:


Ըստ Ձեզ՝ աղետի դեպքում տեղական իշխանությունը պատրաստ է արձագանքել ԱԻ-ն



Ըստ Ձեզ՝ աղետի դեպքում Համայնքի բնակչությունը Պատրաստ է արձագանքել ԱԻ-ն





Ըստ Ձեզ՝ աղետի դեպքում Դուք պատրաստ եք Արձագանքել ԱԻ-ն



Դպրոցի անձնակազմի և աշակերտների հնարավոր արտակարգ իրավիճակներին դիմակայելու պատրաստվածության ինքնագնահատականը երևում է ստորև բերված գրաֆիկներից:



Աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում ձեր դպրոցի անձնակազմը պատրաստ է դիմակայելու և արձագանքելու:



աշխատակազմ

աշակերտներ

Աղետի կամ արտակարգ իրավիճակի դեպքում ձեր դպրոցի աշակերտները պատրաստ են դիմակայելու և արձագանքելու:



աշխատակազմ աշակերտներ


Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակում առաջանում են գործոններ, որոնց ազդեցությունը վտանգավոր է կյանքի և առողջության համար:

Մարդու գոյատևելու ունակությունը պայմանավորված է հոգեբանական պատրաստվածության և սեփական անվտանգության կանոնների մացության մակարդակից:


Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատվություն է կրում դպրոցի ողջ անձնակազմի անվտանգության համար:

Ահ-ին արձագանքման ոլորտում գործող շահագրգիռ կողմերի վերաբերյալ բնակչության իմացության ուսումնասիրությունը բացահայտեց, որ աղետների արձագանքման և հետևանքների վերացման գործում հարցման մասնակիցները հիմնականում տեսնում են համայնքի բնակչության, տեղական իշխանության, փրկարար ծառայության, ՀՀ կառավարության, սոցիալական համակարգի, առողջապահական համակարգի և մարդասիրական կազմակերպությունների մասնակցությունը:

Ըստ ձեզ՝ որ կառույցները կարող են եականդերի աղալաղետի դեպքում մինչև հիմնական ուժերի ժամանումը:



Աղետի դեպքում հիմնական դերակատարներին վերաբերվող ստացված արդյունքները պայմանավորված են երկու հանգամանքով. Վերջին տարիներին տեղի ունեցած արտակարգ իրավիճակների պատճառած տնտեսական վնասներով, կորուստներով և վերոհիշյալ շահագրգիռ կողմերի արձագանքման աստիճանով, և որ կառույցներից է համայնքի բնակչությունը աջակցություն ակնկալում հետագայում:




Դպրոցի անձնակազմի և աշակերտների շրջանում իրականացված ուսումնասիրությունը բացահայտեց, որ աղետներին արձագանքման և հետևանքների վերացման գործում հարցման մասնակիցները հիմնականում տեսնում են համայնքի բնակչության, տեղական իշխանության, բարերարների և փրկարար ծառայության մասնակցությունը:

Փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներին դիմակայելու և արձագանքելու պատրաստվածության հանգամանքը պայմանավորված է բնակչության պատրաստակամությունից՝ կամավոր ներգրավվել տարբեր ծրագրերում՝ ուղղված աղետների նախապատրաստմանը, կանխարգելմանը և արձագանքմանը: Աղետներին նախապատրաստումն ու կանխարգելումը ներառում են աղետից առաջ, ժամանակ և հետո մի շարք գործողություններ: Այդպիսի ծրագրերը ներառում են գործողություններ, որոնցից կշահի ողջ համայնքը:

Աղետներին նախապատրաստումն ու կանխարգելումը ներառում են աղետից առաջ, ժամանակ և հետո մի շարք գործողություններ: Բնակչության կողմից արտահայտված կամավորության պատրաստակամությունն առավելություն է, որը պետք է հաշվի առնվի և կիրառվի:

Հարցման մասնակիցների 67%-ը պատրաստակամություն հայտնեց կամավոր մասնակցել աղետների հետ կապված նախապատրաստական, կանխարգելման և արձագանքման աշխատանքներին: Ստորև բերված գրաֆիկն արտացոլում է հարցվողների պատասխանները ԱԻ-ից առաջ կամ հետո իրականացվող աշխատանքներին մասնակցության վերաբերյալ:



ԱԻ-ի դեպքում համայնքի բնակիչների կողմից ձեռնարկվող անհրաժեշտ գործողությունների իրականացման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բնակչությունը ամենաառաջնային քայլերն է համարում՝

- իրականացնել աղետներին նախապատրաստման և կանխարգելման աշխատանքներ,
- վտանգի մեջ գտնվողների փրկումը,
- առաջին օգնության ցուցաբերումը:

Բնակչության շրջանում աղետից առաջ կամ հետո իրականացվող աշխատանքներին մասնակցության վերաբերյալ ստացված տեղեկություններ

Հարկ է նշել, որ հարցման մասնակցաց բոլոր աշակերտները և աշխատակազմի 83%-ը ցանկություն հայտնեցին մասնակցելու հատուկ դասընթացների և վարժանքների միջոցով բարձրացնել արտակարգ իրավիճակներին դիմակայելու կարողությունները: Իսկ դպրոցում տարահանման և ազդարարման պլանների, կապի և ազդարարման միջոցների առկայությունը, դպրոցի անձնակազմի պարտականությունների ճիշտ բաշխումը և իմացությունը, գործնական պարապմունքների և ուսումնական տարահանումների անցկացումը նպաստում են երեխաների մոտ ծայրահեղ իրավիճակներին արագ արձագանքելու ունակությունների զարգացմանը և մտքի ու գործողությունների ավտոմատիզմի ձևավորմանը:

Ամփոփելով արդյունքները կարելի է եզրակացնել, որ համայնքի բնակչությունը գիտակցում է, որ ներգրավելով նախապատրաստման և կանխարգելման գործողություններում, կարելի է նվազեցնել աղետի ազդեցությունը, որն ուղղակիորեն ազդում է համայնքի կայուն զարգացման գործընթացի վրա: Ակնհայտ է, որ յուրաքանչյուր համայնք ունի մարդկային և տեխնիկական

ռեսուրսներ, ուստի որոշ խնդիրներ կարող են լուծվել սեփական ուժերով: Այդպիսի գործողություններից կշահի ողջ համայնքը:

Աղետների ռիսկի նվազեցման երեխաներին նվիրված հոչակագիրը շեշտում է.

- դպրոցները պետք է լինեն անվտանգ և կրթությունը պետք է ընթանա առանց ընդհատումների,
- երեխաների պաշտպանությունը պետք է լինի առաջնային խնդիր աղետից առաջ, աղետի ժամանակ և հետո,
- երեխաներն ունեն մասնակցության և իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու իրավունք,
- համայնքների ենթակառուցվածքները պետք է լինեն ապահով, և մարդասիրական օգնությունը և վերականգնումը պետք է օգնեն՝ նվազեցնելու ապագա ռիսկերը,
- աղետների ռիսկի նվազեցումը պետք է հասանելի լինի ամենախոցելի խմբերին:

2. ՀԱՎԱՔԱԳՐՎԱԾՏՎԱԼՆԵՐԻՎԵՐԼՈՒԾՈՒՄ

2.1 Եզրակացություններևառաջարկություններ

ԱՌՆ արդյունքները ամփոփող ժողովը ձևավորեց եզրակացություն համայնքի թույլ և ուժեղ կողմերի, համայնքի հնարավորությունների և առկա կամ հնարավոր խոչընդոտների, ինչպես նաև կլիմայի և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված նպաստավոր նախագծերի վերաբերյալ:

Ակնհայտ է, որ բնակիչները գերապատվությունը տալիս են տնտեսական խնդիրների հրատապ լուծմանը, իսկ ԱՌՆ նախագծերը կարևորում են, եթե վերջինները անմիջականորեն նպաստավոր են հաղթահարելու առկա վտանգները՝ լինեն կլիմայի փոփոխության, թե բնական վտանգավոր երևույթների հետ կապված: Ինչ վերաբերում է կլիմայի և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված երկարաժամկետ նախագծերին, որոնք տեղ պետք է գտնեն համայնքի զարգացման պլաններում, բնակիչների կարծիքով, համայնքի ուժից վեր է նման նախագծերի իրականացումը, որոնք պահանջում են ֆինանսական, մասնագիտական, այլ անհրաժեշտ ներդրումներ, սակայն համայնքը չունի նման կարողություններ: Որպես նման նախագծերի իրականացնողի՝ համայնքը նշել է ՀՀ կառավարությանը:

Այնուամենայնիվ, համայնքն իրեն համարում է աղետների ռիսկի նվազեցման գործընթացի հիմնական դերակատարներից մեկը և պատրաստ է ներդնել իր ներուժը կլիմայի և աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված նախագծերի իրականացման համար իր ունեցած հնարավորությունների չափով:

Ինչ վերաբերում է ԱՌՆ ոլորտին առնչվող համայնքի հնարավորություններին Հայաստանում տեղի ունեցող մի շարք զարգացումների տեսանկյունից, ապա համայնքը հստակորեն չի պատկերացում իր հնարավորությունների իրական ներդրման դաշտը: Մասնավորապես, հաշվի առնելով, որ թեև ուշադրության կենտրոնում է գտնվում համայնքների կարողությունների հզորացմանն ու աղետակայունության բարձրացմանն ուղղված գործընթացները, սակայն վերջիններն առաջմ 'շոշափելի' չեն համայնքի համար: Համայնքն ունի ԱՌՆ դաշտի և այնտեղ

տեղի ունեցող ինստիտուցիոնալ և իրավական զարգացումների հետ կապված տեղեկատվական բաց, հատկապես իր հնարավորությունների և վերջինների տեղայնացման տեսանկյունից:

2.2 Համայնքի ուժեղ կողմերը

- Բարենպաստ բնակլիմայական պայմաններ անասնապահության, այգեգործության և բանջարաբուծության համար,
- Զարի արտադրամասի առկայություն
- Կարի արտադրամասի առկայություն
- տեղեկատվական աղբյուրների հասանելիություն,
- տրանսպորտային միջոցներ,
- մարդկային ներուժի առկայություն,
- բուժկետի առկայություն,
- գազամատակարարման առկայություն,
- ջրամատակարարման համակարգի առկայություն,
- համայնքապետարանի առկայություն,
- պատմամշակութային կոթողների առկայություն,
- անտառի առկայություն,
- դպրոցի առկայություն,
- համայնքի ղեկավարությունը գիտակցում է ԱՌՆ միջոցառումների կարևորությունը և պատրաստակամ է ներառել տեղական զարգացման պլաններում (ըստ զարգացման ոլորտների):
- ԱՌՆ համայնքային թիմի առկայություն և պատրաստակամություն:

2.3 Համայնքի թուլ կողմերը

- Ոռոգում չկա,
- ոռոգման ցանցի վատ վիճակ և անբավարարություն,
- վերամշակող արտադրամասերի բացակայություն,
- համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների բացակայություն, համայնքի առջև ծառացած առաջնահերթ խնդիրները լուծելու համար,
- սելավատարի բացակայություն,
- հակակարկտային կայանների տեղադրում
- շանթարգելների տեղադրում
- աղետների ռիսկերի նվազեցման, ԱԻ-ին արձագանքման և հետևանքների վերացման վերաբերյալ գիտելիքների ցածր մակարդակ,
- գյուղապետարանի նյութատեխնիկական բազայի անբավարարություն,
- գյուղատնտեսական հողերի մշակման համար անհրաժեշտ մասնագիտացված տեխնիկայի բացակայություն,
- կլիմայի փոփոխությանը դիմակայելու և հարմարվելու համար անհրաժեշտ գիտելիքների, իրազեկվածության և հմտությունների բացակայություն:

2.4 Համայնքի հնարավորությունները

- գյուղատնտեսական ոլորտի զարգացում,
- ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ԱՌՆ ռազմավարություն, որպես ինստիտուցիոնալ և իրավական դաշտի կարգավորման մեխանիզմ,
- երկրում տեղի ունեցող նոր զարգացումները՝ ուղղված աղետների ռիսկի նվազեցման մշակույթի ձևավորմանը,

- ԱՌՆԱԴ Ազգային պլատֆորմի առկայությունը՝ որպես ԱՌՆ գործընթացների ազգային միասնական մեխանիզմ,
- աղետներին արձագանքելու և հետևանքների վերացման ուղղությամբ առկա իրավական դաշտ, որտեղ հստակ սահմանված են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու պարտականությունները,
- աղետների և կլիմայի ռիսկերի նվազեցմանն ուղղված նախագծերի ներառում համայնքային զարգացման պլաններում՝ ըստ ոլորտների,
- բնակչության ուսուցման և իրազեկվածության բարձրացման համար մասնագիտացված ուսումնական բարձրագույն հաստատության (Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա – ՃԿԴԱ), ինչպես նաև ուսումնական տարբեր նյութերի առկայություն,
- երկրում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների քաղաքականությանն ուղղված համայնքահեն ծրագրերի իրականացում,
- մարզային ԱՌՆ թիմերի առկայությունը,
- ԱՌՆ գործընթացներում մասնավոր բիզնեսի շահագրգռումը և հնարավոր ներգրավում,
- ԱՌՆ համայնքային աշխատանքային խմբի ստեղծման համար առկա մարդկային ներուժ:

2.5 Համայնքի և մասնավորապես աղետների ռիսկի նվազեցման գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնները

Գոյություն ունեն նաև մի շարք խոչընդոտ հանդիսացող գործոններ, որոնք կարող են դանդաղեցնել կամ դադարեցնել հնարավոր զարգացումներն ու համայնքի կարողությունները.

- համայնքային մակարդակում ԱՌՆ զարգացումների դանդաղ ինտեգրումն ու տեղայնացումը,
- չնայած միգրացիայի նվազող տեմպերին, այնուամենայնիվ առկա միգրացիայի պատճառով համայնքի մարդկային՝ մասնագիտական ներուժի միգրացիա,
- համապատասխան տեխնիկայի բացակայություն,
- ԱՌՆ վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքի պակաս:

Համայնքի կողմից բացահայտված վտանգավոր երևույթները, դրանց պատճառները և հնարավոր լուծումների աղյուսակ

Վտանգի տեսակն ու ընդհանուր բնութագիրը	Խոցելի տարրեր	Բացասական հետևանքներ	ԽԿԳ արդյունքում առաջարկվող լուծումներ/ծրագրեր	Ակնկալվող արդյունք
Բնածին				
Կարկտահարություն Միջին հաշվով՝ տարվա ընթացքում աղետալի կարկտահարումը տեղի է ունենում 2-3 անգամ, մյուսները՝ 4-5 անգամ: Կարկուտից պատճառված վնասներն շատ են, քանի որ մրգի ու բանջարեղենի ծաղկման ու հասունացման ժամկետը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ:	Այգիներ, ,բերք,տանիք:	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում է բերքը, այգիները:վնասում է տանիքները: Բերում է էական նյութական կորուստների:	Հակակարկտային միջոցների տեղադրում, կանխատեսման և վաղազդարարման համակարգի մշակում և կիրառում:	Բերքի պահպանում, տնտեսական վիճակի բարելավում:
Երաշտ Երաշտի նախապայմաններից է, երբ զարնանը մշակաբույսերի ինտենսիվ ոռոգման շրջանում դիտվում է տեղումների սակավություն և չի իրականացվում արհեստական ոռոգում: Վերջին տարիներին ամռան ամիսներին ջերմաստիճանի բարձրացման և տեղումների սակավության պատճառով դիտվում է երաշտային տարիների ավելացում: Բերքի կորուստը պայմանավորված է նաև ընդհանուր ոռոգման ցանցի հետ	Բերք, բնական աղբյուրներ:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և, հետևաբար, նյութական կորուստներ հողագործության, անասնապահական ոլորտներում: Մեծանում է գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների, մշակաբույսերի ոչնչանալու հավանականությունը: Դառնում է սակավաջրության պատճառ: Երաշտային տարիներին արոտավայրերում և խոտհարքներում	Տեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի ներմուծում: Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում: Ոռոգման ցանցի բարեկարգում, ընդլայնում: Զրարբիացման համակարգերի ստեղծում:	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազում:

առկա խնդիրներով:		խոտի քանակը չի բավականեցնում անասնակերի հարցը լուծելու համար::		
Ցրտահարություն Վերջին տարիներին դիտվում են ցրտահարության դեպքերի հաճախացում մասնավորապես գարնան ժամանակահատվածում: Ցրտահարության դեպքերը շարունակաբար մեծացնում են գյուղատնտեսական վնասները՝ վտանգի տակ դնելով համայնքի տնտեսական և սոցիալական բարեկեցությունը:	Բերք, ծառեր բույսեր:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ:	Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում: Բնակչության իրազեկում ցրտահարությունից պաշտպանելու միջոցների, ձևերի վերաբերյալ:	Հնարավոր կորուստներ իխուսափում, նվազում:
Սելավ Համայնքի տեղադիրքի պատճառով, ձնհալի և առատ տեղումների հետևանքով առաջացած սելավները ողողում են գյուղի ցածրադիր տեղամասերը, հոսելով գյուղի ճանապարհներով, լցվում տնամերձ տարածքներ:	Համայնքի ճանապարհներ, տնամերձերայգիներ:	Համայնքի ճանապարհների, տնամերձերի, այգիների վնասում:	Հեղեղատարների և սելավատարների կառուցում:	Հեղեղումներից խուսափում, հնարավոր կորուստներից խուսափում:
Սողանք Համայնքում առկա են սողանքային տեղամասեր: Սողանքները սպառնալիք են ներկայացնում համայնքի ճանապարհների, հողատարածքների, այգիների համար: Սողանքավտանգ գոտում կան նաև բնակելի տներ: Սողանքները ակտիվացմանը նպաստում են հատկապես առատ տեղումները:	Ճանապարհներ, բնակելի տներ:	Սողանքային տեղամասերը սպառնում են բնակելի տներին և ճանապարհին:	Սողանքային հատվածների մասնագիտական զննում, քարտեզագրում, միջոցների հայթայթում նոր տների կառուցման համար: Պարբերական մոնիթորինգի կազմակերպում, վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում:	Հնարավոր կորուստներից խուսափում:

Երկրաշարժ Երկրաշարժը անկախատեսելի երևույթ է և սպառնում է Հայաստանի ամբողջ տարածքին: Կարող է դառնալ նաև երկրորդային այլ երևույթների և արտակարգ իրավիճակների պատճառ:	Մշակույթի տուն, մանկապարտեզներ, բնակելի տներ, շենք- շինություններ, մարդիկ և այլ:	Երկրաշարժը կարող է դառնալ մարդկային և նյութական կորուստների, երկրորդային երևույթների առաջացման պատճառ:	Բնակչության ուսուցում: Սեյսմիկ ռիսկի գնահատում: Տների, շինությունների ամրացում:	Հնարավոր կորուստներ իցխուսափում:
Ուժեղ քամիներ Քամիների ուղղությունը և արագությունը հաստատուն չեն: Սակայն քամիների ուժգնությունը, հատկապես վերջին տարիներին, աճել է: Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում համայնքին:	Տանիքներ, ծառեր, էլեկտրահաղորդակցման հենասյուներ:	Ուժեղ քամիները վնասում են տանիքներին և էլեկտրահաղորդակցման հենասյուներին:	Շենք-շինությունների տանիքների ամրացում: Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում:	Հնարավոր կորուստներից խուսափում:
Առատ տեղումներ Առատ տեղումների հետևանքով հեղեղվում են ափամերձ տարածքները, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:	Ճանապարհներ, բերք:	Առատ տեղումները սպառնում են ներհամայնքային, միջհամայնքային ճանապարհներին: Մեծ վնաս են հասցնում տնամերձ տարածքներին:	Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում:	Հնարավոր կորուստներից և հեղեղումներից խուսափում:
Քարաթափում Համայնքին սպառնում են քարաթափումները, որոնք մեծ վնասներ են հասցնում համայնքի ճանապարհներին, տրանսպորտային միջոցներին և մարդկանց:	Ճանապարհներ, տրանսպորտային միջոցներ, մարդիկ:	Քարաթափումները սպառնում են միջհամայնքային ճանապարհներին, մեքենաներին և մարդկանց:	Քարաթափման հատվածների մասնագիտական զննում : Պարբերական մոնիթորինգի կազմակերպում, վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում:	Հնարավոր կորուստներից խուսափում:

Կայծակ Ամպրոպներն ու կայծակները համայնքում միշտ էլ դիտվել են: Ամպրոպը և կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը:	Էլեկտրասարքավորումներ:	Էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Ընդհատվում է Էլեկտրահաղորդակցումը և կապը:	Շանթարգելների տեղադրում: Բնակչության իրազեկում, ուսուցում:	Հնարավոր կորուստներից խուսափում, նվազում:
Մարդածին				
Հրդեհներ	Անտառ, խոտ, շենք-շինություններ:	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության նվազում, էրոզիա:	Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում: Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Բնակչության իրազեկում: Տեղեկատվական վահանակների տեղադրում:	Էկոհամակարգի, բնակչության կենսակերպի և առողջության պահպանում:
Այլ վտանգներ				
Համաճարակ	Գյուղատնտեսական կենդանիներ:	Անասնազիխի անկում, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում:	Բնակչության ուսուցում և իրազեկում հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ:	Հնարավոր նյութական կորուստների խուսափում, նվազում:
Մկնանման կրծողներ	Պահեստներ, հանդիսանում է ինֆեկցիայի աղբյուր:	Ոչնչացնում է սննդամթերքը: Մարդկանց շրջանում վտանգավորի վանդությունների տարածման սպառնալիք:	Համակարգված պայքարամիջոցների կիրառումը տարվա բոլոր ժամանակահատվածներում:	Հնարավոր կորուստներից խուսափում: Բնակչության առողջության պահպանում:
Վայրի գազաններ	Մարդիկ, կենդանիներ:	Մարդկանց կյանքին և առողջության սպառնալիք, գյուղատնտեսական կենդանիների կորուստ:	Կանոնակարգված որս, ԱՕ ուսուցում, իրազեկում և վարքականոսների ուսուցում:	Հնարավոր կորուստներից խուսափում:



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ/ <<ԱՌՆԱՊ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ՄԱՐԶ	Լոռի	ՀԱՄԱՅՆՔ	Թուվանյան
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՌՆ ԹԻՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ		<<__>> _____ 201_թ.	
	<անուն, ազգանուն>	<ստորագրություն>	
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌՆ ԹԻՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ		<<__>> _____ 201_թ.	
	<անուն, ազգանուն>	<ստորագրություն>	
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԳԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ		<<__>> _____ 201_թ.	
		<ստորագրություն>	
			

<<__>> _____ 201_թ.



ՄԱՐԶԱՅԻՆ ՀԳԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

<անուն, ազգանուն>

<ստորագրություն>



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ/ <<ԱՌՆԱՊ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ	Թումանյան քաղաքը գտնվում է Լոռու մարզում, Ալավերդի տարածաշրջանում, Դեբետ գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոն Վանաձորից՝ 38 կմ: Թումանյանը տեղակայված է ծովի մակարդակից 810 մ բարձրության վրա:
ԳՅՈՒՂԻ ՄԱԿԵՐԵՍԸ	10096,68
ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	



ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՉԱՐԳԱՑՈՒՄԱՊԱՀՈՂԱՌՆԽՆԴԻՐՆԵՐԵՎԴՐԱՆՑԱՌԱՋՆԱՅԵՐԹԼՈՒԾՈՒՄՆԵՐ

3.1 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐ

ՎՏԱՆԳԻ ՏԵՍԱԿՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	ԽՈՑԵԼԻ ՏԱՐԻՐԵՐ	ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՆԱԾԻՆ			
Կարկտահարություն Միջին հաշվով՝ տարվա ընթացքում աղետալի կարկտահարումը տեղի է ունենում 2-3 անգամ, մյուսները՝ 4-5 անգամ: Կարկուտից պատճառված վնասներն շատ են, քանի որ մրգի ու բանջարեղենի ծաղկման ու հասունացման ժամկետը համընկնում է կարկտահարման ժամանակահատվածի հետ:	Այգիներ, ,բերք,տանիք:	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում է բերքը, այգիները:վնասում է տանիքները: Բերում է էական նյութական կորուստների:	- Ֆիքսված և բջջային հեռախոսակապ, - Ինտերնետ, - Տեղակատվական աղբյուրների հասանելիություն, - Մարդկային ներուժ, - Դպրոց, - Համայնքապետարան/բուժկետ, - Խելու ջուր, - Արտաքին ճանապարհների բարվոք վիճակը, - տարահանման պլան, - աղետներից արձագանքման պլան, - հատուկ շշակ, - արագ արձագանքման խումբ: - բարենպաստ բնակլիմայական պայմաններ, - հողային բավարար ռեսուրսներ, - գյուղատնտեսական արտադրանքի մեծ պահանջարկ,
Երաշտ Երաշտի նախապայմաններից է, երբ գարնանը մշակաբույսերի ինտենսիվ ոռոգման շրջանում դիտվում է տեղումների սակավություն և չի իրականացվում արհեստական ոռոգում: Վերջին տարիներից ամռան ամիսներին ջերմաստիճանի բարձրացման և տեղումների սակավության պատճառով դիտվում է երաշտային տարիների ավելացում: Բերքի կորուստը պայմանավորված է նաև ընդհանուր ոռոգման ցանցի հետ առկա խնդիրներով:	Բերք, բնական աղբյուրներ:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և, հետևաբար, նյութական կորուստներ հողագործության, անասնապահական ոլորտներում: Մեծանում է գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների, մշակաբույսերի ոչնչանալու հավանականությունը: Դառնում է սակավաջրության պատճառ: Երաշտային տարիներին արտ-տավայրերում և խոտհարքներում խոտի քանակը չի բավականացնում անասնակերի հարցը լուծելու համար::	
Ցրտահարություն Վերջին տարիներին դիտվում են ցրտահարության դեպքերի հաճախացում մասնավորապես գարնան ժամանակահատվածում: Ցրտահարության	Բերք, ծառեր բույսեր:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ:	

դեպքերը շարունակաբար մեծացնում են գյուղատնտեսական վնասները՝ վտանգի տակ դնելով համայնքի տնտեսական և սոցիալական բարեկեցությունը:			• բնական աղբյուրներ, • կազմակերպված աղբահանություն, • Դեբետ գետի առկայություն և այլն:
Սելավ Համայնքի տեղադիրքի պատճառով, ձնհալի և առատ տեղումների հետևանքով առաջացած սելավները ողողում են գյուղի ցածրադիր տեղամասերը, հոսելով գյուղի ճանապարհներով, լցվում տնամերձ տարածքներ:	Համայնքի ճանապարհներ, տնամերձերայգիներ:	Համայնքի ճանապարհների, տնամերձերի, այգիների վնասում:	
Սողանք Համայնքում առկա են սողանքային տեղամասեր: Սողանքները սպառնալիք են ներկայացնում համայնքի ճանապարհների, հողատարածքների, այգիների համար: Սողանքավտանգ գոտում կան նաև բնակելի տներ: Սողանքները ակտիվացմանը նպաստում են հատկապես առատ տեղումները:	Ճանապարհներ, բնակելի տներ:	Սողանքային տեղամասերը սպառնում են բնակելի տներին և ճանապարհին:	
Երկրաշարժ Երկրաշարժը անկախատեսելի երևույթ է և սպառնում է Հայաստանի ամբողջ տարածքին: Կարող է դառնալ նաև երկրորդային այլ երևույթների և արտակարգ իրավիճակների պատճառ:	Մշակույթի տուն, մանկապարտեզներ, բնակելի տներ, շենք- շինություններ, մարդիկ և այլ:	Երկրաշարժը կարող է դառնալ մարդկային և նյութական կորուստների, երկրորդային երևույթների առաջացման պատճառ:	
Առատ տեղումներ Առատ տեղումների հետևանքով հեղեղվում են ափամերձ տարածքները, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները:	Ճանապարհներ, բերք:	Առատ տեղումները սպառնում են ներհամայնքային , միջհամայնքային ճամապարհներին: Մեծ վնաս են հասցնում տնամերձ տարածքներին:	

Քարաթափում Համայնքին սպառնում են քարաթափումները, որոնք մեծ վնասներ են հասցնում համայնքի ճանապարհներին, տրանսպորտային միջոցներին և մարդկանց:	Ճանապարհներ, տրանսպորտային միջոցներ, մարդիկ:	Քարաթափումները սպառնում են միջհամայնքային ճանապարհներին, մեքենաներին և մարդկանց:	
Կայծակ Ամպրոպներն ու կայծակները համայնքում միշտ էլ դիտվել են: Ամպրոպը և կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը:	Էլեկտրասարքավորումներ:	Էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Ընդհատվում է Էլեկտրահաղորդակցումը և կապը:	
Մարդածին			
Հրդեհներ	Անտառ, խոտ, շենք- շինություններ:	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության նվազում, էրոզիա:	
Այլ վտանգներ			
Համաճարակ	Գյուղատնտեսական կենդանիներ:	Անասնազխի անկում, սոցիալ- տնտեսական վիճակի վատթարացում:	
Մեղմաման կրծողներ	Պահեստներ, հանդիսանում է ինֆեկցիայի աղբյուր:	Ոչնչացնում է սննդամթերքը: Մարդկանց շրջանում վտանգավոր հիվանդությունների տարածման սպառնալիք:	
Վայրի գազաններ	Մարդիկ, կենդանիներ:	Մարդկանց կյանքին և առողջության սպառնալիք, գյուղատնտեսական կենդանիների կորուստ:	

3.2 ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ	ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ	ԱՌՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈԼՈՐՏԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ	ԱՐԵՏԱԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՅՈՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	Համապատասխան գույքով, սարքավորումներով, գրականությամբ վերագինումը կնպաստի որոկայլ ուսուցման կազմակերպմանը, անձնակազմի և աշակերտների ԱՌՆ վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը, կնպաստի աղետներից պաշտպանվածության և դիմակայունության մակարդակի բարձրացմանը:	ԱՌՆ միջոցառումների իրականացումը զգալիորեն կթեթևացնի կրթության համակարգի զարգացման հարցը, քանզի միջոցները, որ տարեցտարի ուղղվում էին տարատեսակ աղետների հետևանքների վերացմանը, կուղղորդվեն կրթական համակարգի բարելավմանը, ինչը կապահովի կրթության շարունակականությունը համայնքում: Կրթօջախների սեյսմակայունության մասնագիտական զննումը հնարավորություն կնձեռնի լավագույնս կազմակերպել համապատասխան շինությունների վերանորոգման ու վերակառուցման աշխատանքները, հետագայում դրանց պահպանումը, շահագործումը ու ընթացիկ վերանորոգումը: Կրթական համակարգում ԱՌՆ ուսուցումը ներառելու արդյունքում կբարելավվեն աշակերտների և ուսուցչական կազմի աղետին դիմակայելու ունակությունները, ինչը կնվազեցնի մարդկայն կորուստների և առողջությանը	Նվազագույնի հասցնել սպառնացող աղետներից / ուժեղ քամիներ, երկրաշարժ, սելավ սողանք/ կրթական համակարգին հասցվող հնարավոր վնասը` վերանայելով և հզորացնելով կրթական համակարգի աղետներին դիմակայելու կարողությունները:

		սպառնացող վտանգների ռիսկը:	
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	Համայնքի և մարզի առողջապահական համակարգի բարելավումը, բուժ հիմնարկի շենքային և աշխատանքային պայմանների բարելավումը, համաճարակների ժամանակին կանխարգելումը և հակահամաճարակային պայքարի ծավալումը, բնակչության իրազեկվածության բարձրացումը զգալիորեն կնվազեցնի աղետներից և համաճարակներից մարդկանց առողջությանը սպառնացող ռիսկը:	Համայնքին սպառնացող ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները, բնակչության գիտելիքների բարձրացումը աղետներին պատրաստվածության և համաճարակներին դիմակայելու հարցում, հանրային ծառայությունների ենթակառուցվածքի կնպաստեն բնակչության անվտանգության ապահովմանը, նրանց առողջության և կյանքի պահպանմանը և բարելավմանը:	Բնակչության առողջության և կյանքին սպառնացող վտանգներից հասցվող վնասը նվազագույնի հասցնելու նպատակով հիմնել բուժկետ, ապահովել որոշ ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումը, բնակչության գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը աղետներին և համաճարակներին պատրաստվածության ուղղությամբ:
ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱՅՐ	Բնապահպանական միջոցառումների հետևողական իրագործումը, Էներգետիկ համակարգի բարելավումը, մարդու հետագա վնասակար գործունեության կանխումը կնվազեցնի տարատեսակ երևույթներից բնությանը սպառնացող ռիսկերը, հատկապես Էկոլոգիականը:	Համայնքի հանրային ծառայությունների պատշաճ մակարդակով կազմակերպումն ու Էներգետիկ համակարգի բարելավումը, գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ճիշտ կազմակերպումը, գյուղատնտեսական, առողջապահական և բնապահպանական ոլորտներում բնակչության գիտելիքների մակարդակի բարձրացումը, կանաչապատ տարածքների ընդլայնումը կնպաստի համայնքի և տարածաշրջանի բնապահպանական վիճակի բարելավմանը:	Շրջակա միջավայրի պահպանման, հասցվող վնասի նվազեցման, բնապահպանական վիճակի բարելավման համար ապահովել որոշ ենթակառուցվածքների գործարկումը և ծառայությունների բարելավումը, բնակչության շրջանում բնապահպանական գիտելիքների տարածումը, կանաչապատ տարածքների պահպանումը և ընդլայնումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	Գյուղատնտեսության ժամանակակից մեթոդների ներդրումը, վերամշակող, տնտեսությունների հիմնումը, անհրաժեշտ գյուղտեխնիկայի ձեռքբերումը և հնի նորոգումը, խորքային հորերի համակարգի և ոռոգման ցանցի բարելավումը, նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի և ցանքաշրջանառության կիրառումը, թունաքիմիկատների, պարարտանյութերի և սերմերի որակի վերահսկումը, պլանավորված օգտագործումը կնպաստի հողերի բերրիության բարձրացմանը՝ միաժամանակ նվազեցնելով հողերի անապատացման և էռոզիայի վտանգը: Միևնույն ժամանակ, հողերի ինտենսիվ օգտագործումը առկա ոռոգման համակարգի պայմաններում և արոտավայրերի ոչ ճիշտ օգտագործումը կմեծացնի հողերի էռոզացման վտանգը:	Կարկտահարության, երաշտի, քարաթափման և ցրտահարության ռիսկերի նվազեցմանն ուղղված մեղմացման և կանխարգելիչ աշխատանքները, հարմարվողականության ծրագրերի իրականացումը և նոր մշակաբույսերի և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև հողերի պաշտպանության և էռոզիայի դեմ պայքարի պլանավորված միջոցառումները, անասնապահական ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը բարենպաստ պայմաններ կստեղծեն ոլորտի կայուն զարգացման համար:	Գյուղատնտեսական ոլորտին սպառնացող ռիսկերից հասցվող վնասը նվազեցնելու նպատակով ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ որոշ ենթակառուցվածքների՝ հատկապես ոռոգման համակարգի, դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների բարելավման, անասնահամաճարակների դեմ պայքարի ուղղությամբ, մշակել և իրագործել կլիմայի փոփոխությանը հասցեագրված հարմարվողականության ծրագրեր, ներառյալ նոր մշակաբույսերի ներդրումը, կազմակերպել բնակչության ուսուցումը գյուղատնտեսական ոլորտին առնչվող խնդիրների՝ հատկապես նոր տեխնոլոգիաների կիրառման մշակույթ ձևավորելու վերաբերյալ:
ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԶԱՂԱՔ ԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔ	Բնակելի տների, շինությունների և ենթակառուցվածքների աշխատանքային վիճակի և վթարայնության համալիր հետազոտումը, դրանց ժամանակին վերականգնումը, վերանորոգումն ու պահպանությունը, շինարարության համար նոր հողհատկացումներ անելիս ռիսկային գործոնների հաշվի առնումը և, վերջապես, շինարարություն իրականացնելիս կառուցապատման համար սահմանված բոլոր նորմերի խստագույն պահպանումը կնվազեցնի գոյություն ունեցող սպառնալիքների ռիսկը և կկանխի նոր ռիսկերի գոյացումը:	ԱՌՆ միջոցառումների իրագործումը կնպաստի շենքերի, շինությունների և ենթակառուցվածքների երկարակյացության ապահովմանը, կնվազեցնի վթարայնության աճի տեմպերը, թույլ կտա հետևանքները վերացնելուն տրամադրվող միջոցները խնայել և ուղղել դրանք կանխարգելիչ և մեղմացման ծրագրերի իրագործմանը:	Նվազագույնի հասցնել սպառնացող ռիսկերից համայնքի տներին, շենք-շինություններին, ենթակառուցվածքներին հասցվող հնարավոր վնասները՝ վերանայելով և հզորացնելով համայնքի աղետներին դիմակայելու կարողությունները, վերանորոգելով և վերակառուցելով ենթակառուցվածքներն ու շենք-շինությունները:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՅՆԵՐ	Նոր աշխատատեղերի ստեղծումը, տնտեսական և սոցիալական իրավիճակի բարելավումը, զբաղվածության և ժամանցի ապահովումը կբերի սեփական և համայնքային շահերի համատեղմանը համայնքի կայուն զարգացումը ապահովելու գործում, անդրադառնալով նաև սպառնալիքներին և ռիսկերին:	Աղետների ռիսկի նվազեցումը հանդիսանում է կայուն զարգացման հիմնական գրավականներից մեկը, ինչը կնպաստի տնտեսական բոլոր ոլորտների դրական զարգացման վրա, ստեղծելով նոր աշխատատեղեր և բարիքներ:	Ապահովել համայնքի հիմնական տնտեսական ոլորտների արդյունավետությունը, երաշխավորելով ենթակառուցվածքների և համակարգերի որակյալ գործարկումը, հակակարկտային, ոռոգման կազմակերպման, կրծողների և գայլերի դեմ ուղղված միջոցառումների իրականացումը, հարմարվողականության երկարաժամկետ ծրագրերի պլանավորումն ու իրագործումը:
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԱՍԱՆԻՏԱՐԻ Ա	Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի անցկացում, խմելու ջրի որակի վերահսկումը կնպաստի առողջ ապրելակերպի կայացման խնդրին: Այն միևնույն ժամանակ կկանխի կեղտաջրերի և անձրևաջրերի ներթափանցումը տնամերձեր և այլ գյուղատնտեսական նշանակության հողեր: Ոռոգման համակարգի և խորքային հորերի բարելավումը կկանխի սակավաջրությունը:	Կոյուղացումը և ջրահեռացման համակարգերի, մաքրման կայանի հիմնումը կնվազեցնի համաճարակների բռնկման ռիսկը: Բնակչության ուսուցումը և իրազեկումը կնվազեցնի համաճարակների բռնկման, բնակչության առողջառությանը սպառնալիքները: Երաշտի վտանգը կնվազի ոռոգման համակարգի ճիշտ կառավարման արդյունքում:	Ապահովել խմելու ջրի որակը և անխափան մատակարարում, լուծել համայնքի կոյուղու, կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման և մաքրման, հարցը: Բարելավել ոռոգման և խորքային հորերի համակարգը:
ՏԵՂԱԿԱՆԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՉԱՐԳԱՅՈՒՄ	Համայնքի յուրաքանչյուր բնակիչ, մասնակից դառնալով համայնքի կառավարման գործընթացին, մեծապես կնպաստի համայնքի անվտանգությունն ու զարգացումն ապահովելու համար ձեռնարկվող քայլերի իրականացմանը, ԱՌՆ –ն դիտելով որպես զարգացման կարևորագույն գործոն:	ԱՌՆ մարզային և տեղական թիմերի ստեղծումը, համայնքում ԱՌՆ կառավարման մասնակցային մեխանիզմների ներդրումը կխթանի տեղական ինքնակառավարման մարմինների դեմոկրատիզացիան, ապահովելով համայնքի բնակչության մասնակցությունը որոշումներ ընդունելու և դրանց իրականացմանը հետամուտ լինելու գործում:	Միջոցներ ձեռնարկել ԱՌՆ կառավարումը համայնքային ինքնակառավարման գործառույթներում ներառելու ուղղությամբ, համայնքի զարգացման պլաններում հաշվի առնել համայնքին սպառնացող և վերջինիս զարգացումը սահմանափակող ռիսկերն ու դրանց նվազեցման ուղիները:

3.3 ԱՌՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՈՒՂԴԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅԱՆ

ՉԱՐԳԱՑՄԱՆՈԼՈՐՏ	ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ	ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ		ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ	ՔԶԾ-ում ԻՆՏԵԳՐՈՒՄ
		Գերակայության ցուցանիշ	Իրականացման ժամկետը		
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	Կրթական օջախների սեյսմակայունության և տեղադիրքի մասնագիտական հետազոտում	1			
	Աղետներին պատրաստվածության վերաբերյալ կրթական օջախների անձնակազմի և աշակերտների ԱՌՆ ուսուցում	4			
	Մանկապարտեզի վերանորոգում	3			
	Դպրոցի հիմնանորոգում	2			
Մանկապարտեզ	Մանկապարտեզի շենքի վերանորոգում	1			
	Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցում	3			
	Մանկապարտեզում ջեռուցման համակարգի անցկացում	2			
	Մանկապարտեզի գույքի ձեռքբերում	4			
	Մանկապարտեզում բուժկետի հիմնում	5			
Դպրոց	Դպրոցի շենքի հիմնանորոգում	1			
	Դպրոցի գույքի ձեռքբերում	3			
	Դպրոցի ցանկապատում	10			
	Դպրոցում ջեռուցման համակարգի	2			

	անցկացում				
	Դպրոցի համակարգիչների ձեռքբերում	12			
	Դպրոցի նոր տեխնիկայի ձեռքբերում	11			
	Դպրոցի լաբորատորիաների նյութերի, գույքի և սարքավորումների ձեռքբերում	7			
	Դպրոցում բուժկետի հիմնում	4			
	Դպրոցի տանիքի վերանորոգում	5			
	Դպրոցի էլեկտրահաղորդագծերի փոփոխում	8			
	Դպրոցի ջրամատակարարման ցանցի վերանորոգում	6			
	Դպրոցի հալոցքաջրերի և անձրևաջրերի հեռացման նոր համակարգի կառուցում	13			
	Դպրոցի սանհանգույցների վերանորոգում	9			
Արվեստի դպրոց	Արվեստի դպրոցի գույքի ձեռքբերում	3			
	Արվեստի դպրոցում ջեռուցման համակարգի անցկացում	1			
	Արվեստի դպրոցի երաժշտական գործիքների ձեռքբերում	2			
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	Համայնքի բնակչության ուսուցում և իրազեկում ԱՌՆ /ԱՕ, վարքականոններ և այլն/ վերաբերյալ	5			
	Սանիտարահիգիենիկ միջոցառումների ձեռնարկում և համայնքի իրազեկում սանիտարահիգիենիկ կանոնների վերաբերյալ	10			
	Կոյուղագծի մասնակի վերանորոգում	4			
	Խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում	2			

	Խմելու ջրի 3 ջրամբարների ցանկապատում	3			
	Առաջին և երրորդ թաղամասերի խմելու ջրի ներքին ցանցի փոփոխում	1			
	Բժշկական կենտրոնի շենքի հիմնանորոգում	9			
	Բժշկական կենտրոնի սանհանգույցների վերանորոգում	11			
	Բժշկական կենտրոնի շտապ օգնության մեքենայի ձեռքբերում	8			
	Բժշկական կենտրոնի դռների և լուսամուտների փոփոխում	7			
	Բժշկական կենտրոնի նոր բուժսարքավորումների ձեռքբերում	6			
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐ	Սանիտարահիգիենիկ միջոցառումների ձեռնարկում և համայնքի իրազեկում սանիտարահիգիենիկ կանոնների վերաբերյալ	8			
	Բնապահպանական ուսուցման կազմակերպում	9			
	Կանաչապատ տարածքների ընդլայնում	10			
	Սողանքային գոտիների մասնագիտական հետազոտում	4			
	Քարաթափման գոտիների մասնագիտական հետազոտում	5			

	Սողանքները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	6			
	Քարաթափումները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	7			
	Սելավատարի վերանորոգում և ընդլայնում	1			
	Սելավատարի /խողովակների/ վերանորոգում	2			
	Կոյուղագծի մասնակի վերանորոգում	3			
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	Նոր մշակաբույսերի ներդրում				
	Չրանոցների հիմնում	12			
	Գյուղատնտեսական միավորումների հիմնում	11			
	Գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգում և ձեռքբերում	13			
	Վերամշակող արտադրամասերի ստեղծում	4			
	Հակակարկտային կայանների տեղադրում	10			
	Գյուղատնտեսական ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսուցում և իրազեկում	5			
	Սառնարանային տնտեսությունների հիմնում	6			
	Բուժանյութերի ձեռքբերում	9			
	Սողանքային գոտիների մասնագիտական հետազոտում	3			

	Սողանքները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման	1			
	Սելավատարի վերանորոգում և ընդլայնում	2			
	Սելավատարի /խողովակների/ վերանորոգում	7			
	Կանոնակարգված որս	14			
	Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցների կիրառում	8			
ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ , ԶԱՂԱԶԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ	Համայնքի շենք-շինությունների սեյսմակայունության մասնագիտական հետազոտում	10			
	Սողանքային գոտիների մասնագիտական հետազոտում	11			
	Քարաթափման գոտիների մասնագիտական հետազոտում	7			
	Սողանքները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	8			
	Քարաթափումները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	9			
	Նոր տների կառուցում	31			
	Վթարային շինությունների վերանորոգում, ամրացում	1			
	Կոյուղագծի մասնակի վերանորոգում	12			
	Խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում	13			
	Խմելու ջրի 3 ջրամբարների ցանկապատում	17			

	Առաջին և երրորդ թաղամասերի խմելու ջրի ներքին ցանցի փոփոխում	14			
	Սելավատարի վերանորոգում և ընդլայնում	15			
	Սելավատարի /խողովակների/ վերանորոգում	16			
	Շանթարգելների տեղադրում	29			
	Հակակարկտային կայանների տեղադրում	30			
	Ավտոմոբիլային 3 կամուրջների հիմնանորոգում	2			
	Հետիոտնային 1 կամուրջի հիմնանորոգում	18			
	Մարզադահլիճի կառուցում	28			
	Եկեղեցիների վերանորոգում	27			
	Ներհամայնքային ճանապարհների 2,1 կմ հատվածի լուսավորում	26			
	Համայնքապետարանի տանիքի վերանորոգում	19			
	Համայնքապետարանի շենքի դռների և լուսամուտների փոփոխում	6			
	Համայնքապետարանում ջեռուցման համակարգի անցկացում	20			
	Մանկապարտեզի շենքի վերանորոգում	4			
	Դպրոցի շենքի հիմնանորոգում	3			
	Դպրոցի ցանկապատում	21			
	Արվեստի դպրոցում ջեռուցման համակարգի անցկացում	5			
	Զրանցների հիմնում	22			

	Գյուղատնտեսական միավորումների հիմնում	25			
	Վերամշակող արտադրամասերի ստեղծում	23			
	Սառնարանային տնտեսությունների հիմնում	24			
Ջրամատակարարում և սանիտարիա	Սանիտարահիգիենիկ միջոցառումների ձեռնարկում և համայնքի իրազեկում սանիտարահիգիենիկ կանոնների վերաբերյալ	6			
	Կոյուղագծի մասնակի վերանորոգում	2			
	Խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում	1			
	Խմելու ջրի 3 ջրամբարների ցանկապատում	5			
	Առաջին և երրորդ թաղամասերի խմելու ջրի ներքին ցանցի փոփոխում	3			
	Սելավատարի վերանորոգում և ընդլայնում	4			
	Սելավատարի /խողովակների/ վերանորոգում	7			
ՉԲԱԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՐԵԼԱՄԻՋՈՑՆԵՐ	Մանկապարտեզի շենքի վերանորոգում	2			
	Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցում	4			
	Դպրոցի շենքի հիմնանորոգում	1			
	Արվեստի դպրոցում ջեռուցման համակարգի անցկացում	3			
	Մարզադահլիճի կառուցում	8			
	Կոյուղագծի մասնակի վերանորոգում	9			
	Սելավատարի վերանորոգում և ընդլայնում	5			
	Սելավատարի /խողովակների/ վերանորոգում	6			

	Սողանքային գոտիների մասնագիտական հետազոտում	7			
	Սողանքները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	8			
	Քարաթափման գոտիների մասնագիտական հետազոտում	1			
	Քարաթափումները կանխելու միջոցառումների իրականացում ըստ հետազոտման արդյունքների	2			
	Խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում	8			
	Խմելու ջրի 3 ջրամբարների ցանկապատում	7			
	Առաջին և երրորդ թաղամասերի խմելու ջրի ներքին ցանցի փոփոխում	9			
	Բժշկական կենտրոնի շենքի հիմնանորոգում	10			
	Նոր մշակաբույսերի ներդրում	22			
	Չրանցների հիմնում	23			
	Գյուղատնտեսական միավորումների հիմնում	24			
	Գյուղատնտեսական տեխնիկայի վերանորոգում և ձեռքբերում	25			
	Վերամշակող արտադրամասերի ստեղծում	11			
	Հակակարկտային կայանների տեղադրում	26			
	Գյուղատնտեսական ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ ուսուցում և իրազեկում	21			
	Սառնարանային տնտեսությունների հիմնում	12			

	Բուժանյութերի ձեռքբերում	20			
	Կանոնակարգված որս	27			
	Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցների կիրառում	13			
	Նոր տների կառուցում	28			
	Վթարային շինությունների վերանորոգում, ամրացում	3			
	Շանթարգելների տեղադրում	19			
	Ավտոմոբիլային 3 կամուրջների հիմնանորոգում	4			
	Հետիոտնային 1 կամուրջի հիմնանորոգում	18			
	Եկեղեցիների վերանորոգում	17			
	Ներիամայնքային ճանապարհների 2,1 կմ հատվածի լուսավորում	14			
	Համայնքապետարանի տանիքի վերանորոգում	5			
	Համայնքապետարանի շենքի դռների և լուսամուտների փոփոխում	6			
	Համայնքապետարանում ջեռուցման համակարգի անցկացում	15			
	Համայնքապետարանի գույքի ձեռքբերում	16			
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ	Համայնքի ԱՌՆ հավաստագրի ձևավորում և հաստատում				
	Համայնքի զարգացման / տարեկան պլանների մշակում և իրականացում				
	Համայնքահեն փոքրածավալ ԱՌՆ ծրագրերի իրականացում				

